

ՄԵՐ ԱՆԿԻՒՆԵՆ

Հայաստանի Ներքաղաքական Խորացող Տագնապը

Հայաստանի ներքին իրադարձությունները կը շարունակեն զարգանալ կայծակնային արագությամբ: Հայաստանի ժողովուրդն ու սփյուռքահայությունը անձկությամբ կը հետեւին հայրենիքի մէջ կատարուող քաղաքական ելեւէջներուն, յուսալով, որ կարելի կը դառնայ շուտափոյթ յաղթահարել օրըստօրէ խորացող տագնապը ու խուսափիլ ւելի մեծ վտանգներէ:

Վերջին օրերուն Հայաստան կ'անցնի սահմանադրական լուրջ ճգնաժամի ընդմէջէն: Զինուած Ուժերու Գլխաւոր Շտաբը եւ բարձրաստիճան այլ զինուորականներ հանդէս եկան յայտարարութեամբ՝ առարկելով Գլխաւոր Շտաբի առաջին տեղակալի պաշտօնէն հեռացման դէմ ու պահանջելու վարչապետի եւ կառավարութեան իրաժարականը:

«Երկրի համար այսպիսի ծանր պայմաններուն մնան որոշունը հակապետական եւ անպատասխանատու քայլ է: ՀՀ վարչապետը եւ կառավարութիւնը այլեւս ի վիճակի չեն ընդունելու ատակ որոշումներ՝ հայ ժողովրդի համար այս ճգնաժամային եւ ճակատագրական իրավիճակուն»,- ըսուած էր բանակի ղեկավարութեան յայտարարութեան մէջ, որուն ի պատասխան Վարչապետ Նիկոլ Փաշինեան որոշեց Զինուած Ուժերու գլխաւոր շտաբի պետ Օնիկ Գասպարեանին հեռացնել իր պաշտօնէն՝ անոր կողմէ առնուած քայլը որակելով «յեղաշրջման փորձ»:

Բնականաբար, ընդդիմադիր խմբաւորումները խանդավառութեամբ ընդունեցին զինուորականներու այս դիրքորոշումը խորհելով որ Փաշինեանին հեռացնելու իրենց նպատակը մօտեցած է իր ւարտին: Սակայն, բանակի այս պահուածքը առիթ տուաւ նաեւ վարչապետին, որպէսզի ցոյց տայ թէ ինք կը շարունակէ վայելել հասարակութեան բաւականին լայն խաւի վստահութիւնը եւ կրնայ կարճ ժամանակուայ ընթացքին զօրաշարժի ենթարկել Հայաստանի քաղաքացիները: Յիշեցնելով 2018 թաւշեայ յեղափոխութեան օրերը, ան երկու առիթներով կարողացաւ Երեւանի կեդրոնական հրապարակը լեցնել բազմահազար իր համակիրներով, հասկնցնելով ներքին եւ արտաքին ուժերուն, որ այդքան ալ հեշտ պիտի չըլլայ զինք հեռացնել վարչապետի պաշտօնէն:

Տագնապը ւելի սուր բնոյթ ստացաւ երբ Նախագահ Արմէն

Մարտի 1-ի Տարելիցին Առթիւ Տեղի Ունեցաւ Բազմահազարանոց Հանրահաւաք Փաշինեան Յայտարարեց՝ Միայն Ժողովուրդը Պէտք է Որոշի Ով Լինի Իշխանութիւն Եւ Ով ՉԼինի



Վարչապետ Նիկոլ Փաշինեան հանրահաւաքի ընթացքին

Վարչապետ Նիկոլ Փաշինեան Մարտ 1-ին, Հանրապետութեան հրապարակին վրայ հաւաքուած տասնեակ հազարաւորներու ներկայութեան անդրադարձաւ երկիրը յուզող շարք մը թեմաներու: Նախ ան յայտարարեց, որ կը մնայ իր կարծիքին, թէ Զինուած Ուժերու Գլխաւոր Շտաբի պետ՝ Օնիկ Գասպարեանը պէտք է լքէ այդ պաշտօնը: Աւելին ըսաւ, որ Գասպարեան, վարչապետի ու կառավարութեան հրաժարականը պահանջող յայտարարութիւնը ստորագրած է երրորդ նախագահ՝ Սեթ Սարգսեանի դրդմամբ:

Նախագահ Սարգսեանի Որոշումէն Ետք Օնիկ Գասպարեան Իրաւունքի Ուժով Կը Նկատուի Ազատուած Պաշտօնէն

Մարտ 2-ին Նախագահ Արմէն Սարգսեան յայտարարեց, որ չ'ընդունիր Զինուած Ուժերու գլխաւոր շտաբի պետ Օնիկ Գասպարեանը պաշտօնէն ազատելու՝ վարչապետ Նիկոլ Փաշինեանի առաջարկութիւնը եւ Սահմանադրական դատարան (ՄԴ) դիմած է մէկ այլ՝ «Զինուորական ծառայութեան եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրէնքի առնչութեամբ: Նախագահը յիշեցուցած է, որ իր նախորդ յայտարարութիւններուն մէջ ընդգծած էր, որ խնդրի շուտափոյթ եւ Սահմանադրութեան ծիրէն ներս կարգաւորուած Հայաստանի եւ Արցախի անվտանգութեան ու կայունութեան համար առաջնային կարեւորութիւն ունի եւ բացարձակ անհրաժեշտութիւն է պետականութեան պահպանման, հասարակութեան հետազոյց պառակտումը կանխելու, ժողովուրդի միասնութիւնը եւ հանրային համերաշխութիւնը վերականգնելու, ստեղծուած անորոշ վիճակէն դուրս գալու եւ վերջնական հանգուցալուծման հասնելու հա-



Հանրապետութեան հրապարակին վրայ հաւաքուած ժողովուրդը

րագրած է երրորդ նախագահ՝ Սեթ Սարգսեանի դրդմամբ: Հայաստանի մէջ 2021 թուականի Մարտ 1-ը կը դիմաւորեն այնպիսի իրավիճակի մէջ, երբ առկայ են դարաբաղեան 2-րդ պատերազմի ծանր հետեւանքները, հազարաւոր զոհերու փաստը, անհետ կորածներու հարցը, բազմաթիւ զերիներու հանգամանքը, բռնութեան քարոզը, զինուած ուժերը քաղաքական գործընթացներու մէջ ներքաշելու գործընթացը, Հանրապետութեան հրապարակի

վրայ կայացած հանրահաւաքին ընթացքին այս մասին ըսաւ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան՝ նշելով, որ այդ ամէնը երկիրն ու ժողովուրդին նոր մարտահրաւերներ բերած է:

Երկրի ղեկավարը նաեւ հրապարակայնօրէն խոստացաւ երթալ արտահերթ ընտրութիւններու առաջնահերթ խորհրդարանական խմբակցութիւններու համաձայնութեան պարագային, ինչպէս նաեւ



Նախագահ Արմէն Սարգսեան

մար, ապա յայտարարած. «Հանրապետութեան նախագահը որոշել է չստորագրել հրամանագրի նախագիծը»: Միաժամանակ, առաջնորդուելով Սահմանադրութեան 169-րդ յօդուածի 1-ին մասի 4-րդ

Ուաշինկթըն Կը Շարունակէ Ուշադրութեամբ Հետեւիլ Հայաստանեան Զարգացումներուն

Պաշտօնական Ուաշինկթոն դիմած է հայաստանեան ուժերուն՝ յորդորելով զսպառնալից ջրուցաբերել եւ թուլացնել լարուածութիւնը: Երեւանի մօտ ԱՄՆ-ի դեսպանատան յորդորէն յետոյ, մասնաւորապէս, նման յայտարարութեամբ հանդէս եկած է նաեւ Պետական Բաժանմունքը:

«Ի՞նչ կը կատարուի Հայաստանի մէջ, արդեօք դուք կը կարծէք, որ, ինչպէս վարչապետը ըսած է, այնտեղ ուղղակի յեղաշրջման փորձ եղած է, եւ կը սատարէք արդեօք իրեն որպէս վարչապետ», - հարցուցած է լրագրողներէն մէկը Պետական Բաժանմունքի խօսնակ՝ Նէտ Փրայսին:

«Մենք, անշուշտ, տեղեակ ենք վերջին զարգացումներէն եւ կը յորդորենք բոլոր կողմերուն

ՎԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

Նախագահի Առարկուքի Անդամները Բացարձակ Հիմնագուրկ Են Այստեղ Իրաւական Վեճ Չկայ

ՍՈՆԱ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Նախագահ Արմէն Սարգսեանը շաբաթ օրը Հատորագրեց ԳՇ պետ Օնիկ Գասպարեանին աշխատանքից ազատելու վարչապետի որոշումը: Արմէն Սարգսեանը վարչապետի որոշումը՝ առարկուքի թիւններով հանդերձ, հետ ուղարկեց վարչապետին:

Երէկ էլ արդէն համացանցում էր յայտնուել Արմէն Սարգսեանի առարկուքի թիւններով փաստաթուղթը: Ըստ նախագահի՝ «Պաշտպանութեան մասին» օրէնքի 16-րդ յօդուածի 4-րդ մասի համաձայն՝ Զինուած ուժերի գլխավոր շտաբի պետը նշանակուում է 5 տարի ժամկէտով: Հետեւաբար՝ ԳՇ պետին օրէնքով նախատեսուած ժամկէտից աւելի վաղ ժամկէտում պաշտօնից ազատելու հիմքեր եւ կարգ նախատեսուած չեն: Նախագահը գտել է, որ դրանից ելնելով՝ ԳՇ պետին պաշտօնից ազատելու հրամանագիրը առերեւոյթ չի համապատասխանում Սահմանադրութեան 155-րդ յօդուածի 3-րդ մասին:

Նախագահը նաեւ նշել է, որ ԳՇ պետին պաշտօնից ազատելը կարող է յանգեցնել գլխաւոր շտաբի բնականոն գործունէութեան խաթարմանը՝ դրանից բխող սահմանադրական կարգին սպառնացող վտանգներով:

Իրաւաբանները, սակայն, հա-

մարում են, որ այստեղ իրաւական վեճ չկայ: Հանրապետութեան վարչապետի միջնորդութեամբ ու նախագահի հրամանագրով, ԳՇ պետը ցանկացած պահի կարող է ազատուել աշխատանքից: «Վարչապետը, օգտուելով ՀՀ Սահմանադրութեամբ իրեն ընձեռուած հնարաւորութիւնից՝ միջնորդագիր է ներկայացրել ՀՀ նախագահին՝ աշխատանքից ազատելու ԳՇ պետին: Ես ձեռնպահ եմ մնում մեկնաբանել նախագահի հիմնաւորումները, առարկուքի թիւններն ու պատճառաբանութիւնները: Դրանք նախագահական ինստիտուտի կողմից առաւել լայն մեկնաբանման անհրաժեշտութիւն ունեն: Այստեղ իրաւական վեճ չկայ: Սա վեճ է երկու սահմանադրական մարմինների միջեւ իրենց սահմանադրական լիազօրութիւններ իրականացնելու գործընթացում: Կարծում եմ՝ հանգուցայլուածում 1-2 օրուայ մէջ կ'աւարտուի, ու արդիւնք կը լինի», - ասաց իրաւաբան Նորայր Նորիկեանը՝ յաւելելով, որ շատ կարեւոր է Զինուած ուժերի վարչապետը, որ նրանք դուրս չգան Սահմանադրութեան շրջանակներից եւ զբաղուեն իրենց լիազօրութիւնների իրականացմամբ՝ այն է երկրի սահմանների պաշտպանութիւնը: «Զինուած ուժերը բոլոր պարագաներում պէտք է գերծ մնան քաղաքական գործընթացներում ներքաշ-

ուելուց կամ քաղաքական գործունէութեամբ զբաղուելուց: Իսկ հիմա առանձնապաշտուել իրավիճակ ունենք: Խնդիրը պէտք է լուծել բացառապէս խաղաղ, քաղաքական գործիքներով եւ բացառապէս օրէնքով նախատեսուած կարգով», - ասաց Նորիկեանը:

Իրաւաբան Արտաշէս Խալաթեանի համար եւս զարմանալի են նախագահի առարկուքի թիւնները: Նրա խօսքերով՝ ԳՇ պետին ազատելու հարցում հակասահմանադրական ոչ մի խնդիր չկայ: «Ես այդ առարկուքի միջոցով հիմնաւոր չեմ համարում, որովհետեւ Սահմանադրութեան համապատասխան դրոյթը իստում է որոշակի ժամկէտով ԳՇ պետ նշանակելու իրաւունքի մասին, բայց շատ մեծ երեւակայութիւն է պէտք ունենալ, որպէսզի պատկերացնել, որ նշանակելու լիազօրութիւնը չի ենթադրում ազատելու լիազօրութիւն: Աւելին, սահմանադրական իրաւունքում կայ չգրուած կանոն, որ պաշտօնեան ինչ եղանակով որ նշանակուում է, այդ եղանակով էլ կարող է պաշտօնանկ արուել: Հետեւաբար՝ վկայակոչել այն փաստը, որ Սահմանադրութեան մէջ ազատման մասին ոչ մի բան յստակօրէն չկայ, դա պարզապէս խիստ ֆորմալիստական մօտեցում է եւ չի բխում այդ նորմի մեկնաբանման տեսանկիւնից: Պատկերացրէք, որ ԳՇ պետը

թոյլ է տուել ակնյայտ սխալ, ցուցաբերել է մասնագիտական ոչ կոմպետենտութիւն, կամ տուեալ պարագայում Սահմանադրութեան 14 յօդուածի 2-րդ մասն է խախտում, հանդէս է գալիս քաղաքական յայտարարութեամբ: Ինչ է ստացուում՝ վարչապետը չի կարող ԳՇ պետին ազատել աշխատանքից, քանի որ նա 5 տարի ժամկէտով է նշանակուել: Ձի կարող նման բան լինել, ու օրէնքի նման մեկնաբանութիւնը շատ վտանգաւոր է», - ասաց Խալաթեանը՝ յաւելելով, որ օրէնքի նման մեկնաբանութիւնից կարելի է եզրակացնել, որ ԳՇ պետը անձեռնմխելի է, որը այդպէս չէ: «Ստացուում է, որ ԳՇ պետը պաշտօնավարման առումով նոյն երաշխիքները ունի, ինչ հանրապետութեան նախագահը, որը տոնսն է: ԳՇ պետը ենթակայ է եւ՝ ՀՀ վարչապետին, եւ՝ հանրապետութեան նախագահին: Հետեւաբար, նախագահի առարկուքի թիւնները բացարձակ հիմնագուրկ են», - ասաց Խալաթեանը:

Փաստաբանը, սակայն, որոշակիօրէն համաձայն է առարկութեան երկրորդ մասին հետ, որ այդ որոշումը կարող է բերել սահմանադրական կայունութեան խաթարմանը. «Դա աւելի որոշման է, քան առարկութիւնների առաջին մասը:

Բայց մի բան պարզ է, որ նախագահի ու վարչապետի միջեւ փոխըմբռնման բացակայութիւնը կարող է շատ վատ հետեւանքների յանգեցնել մեր պետական ու քաղաքական կարգը:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Ալիեւը Սպառնում Է Եռակողմ Յայտարարութեան Ողջ Տրամաբանութեանը

Ատրպէյճանի Նախագահի Բացասական Ակնարկները Ռուսաստանի Ուղղութեամբ

ԱՐՄԵՆ ՎԱՐԴԱՆԵԱՆ

Ատրպէյճանի նախագահը դուրս է գալիս միջազգային հանրութեան եւ կազմակերպութիւնների դէմ՝ հերթական անգամ յայտարարելով, թէ Արցախի կարգավիճակի հարցը պէտք է օրակարգից դուրս գայ: Ալիեւը նման յայտարարութիւն է անում այն ժամանակ, երբ ԱՄՆ-ը, ԵՄ երկրները եւ Ռուսաստանը ոչ միայն խօսում, այլեւ գործուն քայլեր են անում քաղաքական բանակցութիւնների վերակազմման եւ Արցախի կարգավիճակի հարցը որոշելու ուղղութեամբ:

«Ես խորհուրդ եմ տալիս Հայաստանին եւ հայ ժողովրդին աւելի քիչ խօսել այս հարցի շուրջ, չկառուցել դատարկ յոյսեր: Այս հարցը պէտք է լինի օրակարգից դուրս: Դրա բարձրագույնը նշանակում է ծառայել ոչ թէ խաղաղութեան, այլ առճակատման», - «ՌԻԱ Անոյոտտի» տեղեկացմամբ՝ այդ մասին յայտնել է Ատրպէյճանի առաջնորդը տեղական եւ միջազգային լրատուամիջոցների ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ:

Վերջինս նաեւ յայտարարել է, որ Ատրպէյճանում միակ պետական լեզուն ատրպէյճաներէնն է: Այստեղ մի կողմ թողնելով հարցը, որ Ատրպէյճանի ղեկավարը խօսում է իրականութեան հետ աղերս չունեցող եւ անիրականանալի երազանքի մասին: Այլ կերպ ասած՝ Ալիեւի պատկերացրած Արցախն առանց այցերի է լինելու, ինչը ֆանտաստիկայի ժանրից է: Այստեղ հարցի միւս կողմն այն է, որ Ալիեւը լեզուի հարցը բարձրաց-

նում է այն ժամանակ, երբ Արցախում մտադրութիւն կայ ունենալու երկու պետական լեզու՝ հայերէնը եւ ռուսերէնը: Պատերազմի աւարտից երէք ամիս անց Ատրպէյճանն արդէն թափանցիկ ակնարկներ է ուղղում ՌԴ-ի ուղղութեամբ: Բացի լեզուի խնդրից, վերջինս նաեւ յայտարարում է, որ ՌԴ խաղաղապահները չեն համարում ռազմական բազա եւ ժամանակաւոր են տարածաշրջանում:

Ատրպէյճանի առաջնորդը մէկ ասուլիսի ընթացքում ՌԴ-ին ուղղուած այլ ժեստեր էլ է անում: Դրանից մէկն իրենց մօտ պահող հայ ռազմագերիների հարցն է: «Նրանք, ովքեր այժմ մնում են Ատրպէյճանում, դիւերասնտներ են: Հայաստանի եւ այլ երկրների կողմից ցանկացած շահարկում անտեղի է», - յայտարարել է Ալիեւը: Այս խօսքերով վերջինս ռուսական կողմին պարզ ասում է, որ հրաժարուի ռազմագերիների հարցում միջնորդի իր ստանձնած առաքելութիւնից: Նկատելով, որ ռուսական խաղաղապահ զօրախմբի հրամանատարը նախկինում յայտարարել էր ռազմագերիների վերադարձի մասին: Վերջին հարցում Ատրպէյճանը, մեղմ ասած, խաբել է ռուսական կողմին: Այն ժամանակ, երբ ռուս խաղաղապահներն ապահովում էին Հին Թաղեր եւ Խժաբերդ գիւղերի գիրքերից Արցախի պաշտպանութեան բանակի դիրքապահների դուրսբերումը, Ատրպէյճանին յաջողուեց ստանալ խաղաղապահների վստահութիւնը եւ, փակելով մեր ստորաբաժանման յետդարձի ճանապարհը, գերի վերցնել հայ գինուորականներին: Խաղաղապահ ուժերը, ըստ ամենայնի,

ակնկալելով, որ գործելու է հրազարի վերաբերեալ եռակողմ յայտարարութեան 9-րդ կէտը, այն ժամանակ առանձնակի ջանքեր չգործադրեցին: Նրանք ակնկալում էին, որ Ատրպէյճանը կը կատարի ստանձնած պարտաւորութիւնները: Բայց վերջինս, ըստ հոլթեան, խաբեց բոլոր կողմերին, իսկ այսօր Ալիեւը խօսում է պայմանաւորուածութիւնների պահպանման անհրաժեշտութեան մասին:

Այս քանից յետոյ Ալիեւը յայտարարում է, որ եթէ ամէն ինչ ընթանայ ճիշտ այնպէս, ինչպէս մտածում են, ապա ինչ-որ փուլում չեն բացառուում խաղաղութեան պայմանագրի ստորագրումը, քանի որ Նոյեմբերի 9-ի փաստացի յայտարարութիւնը հենց խաղաղութեան պայմանագիր է: Նա մէկ ասուլիսի ժամանակ հարցականի տակ է դնում եռակողմ յայտարարութեան ողջ տրամաբանութիւնը եւ այդքանից յետոյ յայտարարում վերջնական համաձայնագրի հաստատման մասին:

Ատրպէյճանի ղեկավարի կողմից եռակողմ յայտարարութեան հիմնադրոյթների անտեսումը եւ կոնֆլիկտի լուծուած լինելու մասին յայտարարութիւնը ոչ միայն հակասում են միմեանց, այլեւ չեն տեղաւորուում որեւէ բանականութեան եւ տրամաբանութեան դասական կանոնների մէջ, ինչը մոլորութեան մէջ է գցում ոչ միայն միջազգային հանրութեանը, այլեւ հենց Ատրպէյճանի հասարակութեանը: Իսկ հայկական երկու պետութիւններում քաջածանօթ են Ալիեւի վարքագծին, եւ որեւէ բան անսպասելի չէ մեզ համար:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ»



ՄԱՍԻՍ ՇՐՈՒԹԱԹԵՐ

ՄԱՍԻՍ ՇՐՈՒԹԱԹԵՐ
ՊԱՇՏՊԱԹԵՐԻՉ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԿՈՄՍԱԿՏՐՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻՓՈՐ ԽՆՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՐԷ ԱԶԱՊԱՐԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

Կայացած է Հանդիպում Արմեն Սարգսեանի Եւ Նիկոլ Փաշինեանի Միջեւ

Հայաստանի Հանրապետութեան նախագահ՝ Արմեն Սարգսեան եւ վարչապետ՝ Նիկոլ Փաշինեան Մարտ 1-ին հանդիպած են:

Ըստ նախագահի գրասենեակին՝ քանի որ Արմեն Սարգսեան վատառողջ է, վարչապետը տեսակցելու նպատակով այցելած էր նախագահը:

«Բնականաբար, Հանրապետութեան նախագահն ու վարչապետն անդրադարձել են նաեւ երկրի ներքաղաքական իրավիճակին: Տարածուող այլ տեղեկութիւնները բացարձակապէս սուտ են, եւ փորձ են անելի սրելու առանց այն էլ լարուած իրավիճակը», - ըստած է հաղորդագրութեամբ:

Նախագահի գրասենեակը անգամ մը եւս յորդորած է՝ «ձեռնպահ մնալ սաղորիչ եւ կեղծ տեղեկութիւններ տարածելուց», միաժամանակ, կրկին ընդգծելով, որ նախագահը կ'առաջնորդուի բացառապէս Սահմանադրութեամբ եւ համապետական ու համազգային շահերով, կը գործէ իր սահմանադրական լիազօրութիւնները ծիրէն ներս:

Նշենք, որ Արմեն Սարգսեան-

Ալեն Սիմոնեան Հանրահաւաքի Մասնակիցները Մարգերէն Երեւան Տեղափոխելը Չի Համարեր Վարչական Միջոցի Օգտագործում

ՀՀ ազգային ժողովի փոխնախագահ՝ Ալեն Սիմոնեան Մարտ 1-ին տեղի ունեցած հանրահաւաքի մասնակիցները մարգերէն Երեւան տեղափոխելը չի համարեր վարչական միջոցի կիրառում:

«Արմէնփրես»-ի հաղորդմամբ՝ այս մասին Սիմոնեան ըսաւ խորհրդարանէն ներս լրագրողներու հետ զրոյցի ընթացքին:

«Երբ հրապարակուեց կանգնած ժողովուրդը միասնական վանկարկում է «Նիկոլ, վարչապետ», միասնաբար լոյսեր են վառու, միասնաբար մասնակցում են հանրահաւաքին, իստեղը, թէ «Քաղաքացիական պայմանագրի» (ՔՊ) գրասենեակը կազմակերպել է իր համակիրներին տեղափոխումն Ա կէտից դէպի Բ կէտ եւ դա անուանել վարչական միջոցի օգտագործում, ներքեցք, այլուր է: Կազմակերպուել է մարդկանց տեղափոխում, բայց դա վարչական միջոցի կիրառում կը լինի այն դէպքում, երբ ԱԺ-ի, Պաշտպանութեան Նախարարութեան կամ Ոստիկանութեան փոխադրամիջոցը ուղարկենք մարզ՝ ՔՊ-ի համակիր բերե-

Նիկոլ Փաշինեան հեռակաջ բանավէճը սկսած է Զինուած ուժերու գլխաւոր շտաբի պետ՝ Օննիկ Գասպարեանը պաշտօնէն ազատելու՝ վարչապետ Նիկոլ Փաշինեանի որոշումէն յետոյ: Օննիկ Գասպարեանը պաշտօնէն ազատելու առաջարկութիւնը վարչապետը նախագահին ներկայացուցած է Փետրուար 25-ին, երբ առաւօտեան հրապարակուեցաւ Զինուած ուժերու անունով ԳՇ յայտարարութիւնը՝ վարչապետի եւ կառավարութեան հրաժարականի պահանջով: Վարչապետը այդ յայտարարութիւնը «նազմական լեղաշըջման փորձ» որակեց: Նոյն օրը կայացած հանրահաւաքին Փաշինեան նաեւ հրաժարական տալու կոչ ըրաւ Գասպարեանին:

Հայաստանի Հանրապետութեան նախագահը Փետրուար 27-ին Գասպարեանը պաշտօնանկ ընելու հրամանագրի նախագիծը առարկութիւններով ետ ուղարկեց վարչապետի աշխատակազմ: Վարչապետն ալ միջնորդութիւնը կրկին ուղարկեց նախագահին՝ նշելով, որ «այս որոշումը ամենեւին չի նպաստում ստեղծուած իրավիճակի հանգուցալուծմանը»:



ՀՀ ազգային ժողովի փոխնախագահ՝ Ալեն Սիմոնեան

լու», - ըսաւ Սիմոնեան:

Յիշեցնենք, որ ՀՀ վարչապետ՝ Նիկոլ Փաշինեան Մարտ 1-ին Հանրապետութեան հրապարակ հրահրած էր հանրահաւաքի, որուն յաջորդեց երթ դէպի Ա. Միասնիկեանի յուշարձանին յարակից հրապարակ՝ յարգելու 2008-ի Մարտ 1-ի զոհերու յիշատակը:

Ծայրայեղ Կրեմլոսոփորներն Ու Թաւիշականները Ոչինչ Կ'ընեն Երկիրը Քառսէն Հանելու Համար, Կ'ըսէ ՀԱԿ-ի Անդամ Արամ Մանուկեան

Լեւոն Տէր Պետրոսեանի գլխաւորած Հայ Ազգային Կոնկրէսի (ՀԱԿ) անդամները Ալեքսանդր Միասնիկեանի արձանի մօտ յարգանքի տուրք մատուցեցին Մարտի մէկի զոհերու յիշատակին:

Կուսակցութեան փոխնախագահ, նախկին պատգամաւոր՝ Արամ Մանուկեան լրագրողներու հետ զրոյցի ընթացքին, իր մտահոգութիւնները ներկայացուց, որ Մարտի մէկի գործը դեռ բուն դատավարութեան փուլին չէ հասած. «Ունենք թատերական ներկայացում, որը կոչուած է դատական գործընթաց, որը երկու տարի դեռ չի մտել դատական իրական գործընթացի մէջ: Սա զաւելչու է, սա ներկայացում է, անպատասխանատուութիւն է զոհերի, երկրի, պետականութեան նկատմամբ: Այսպէս չի կարելի վարուել արդարութեան հետ, ծաղրուծանակի վերածել ամէն ինչ, փաստ է՝ 13 տարի անցել է, եւ ոչ մի գործ առաջ չի գնում, եւ դա է պատճառը, որ ընդդիմադիր աշխատող, ընդդիմադիր կոչուածները, որոնք պատասխանատու են եւ Մարտի մէկի համար, եւ պատերազմի կորստի համար, եւ մեր անցած կորուստներ-



ՀԱԿ փոխնախագահ Արամ Մանուկեան

րի համար, այսօր քաղաքական յայտ են ներկայացրել «քաղաքական իշխանութիւն» վերցնելու», - նշեց ան:

Արամ Մանուկեան շեշտեց նաեւ, որ երկիրը պէտք է երթայ քաղաքական լուծումներու. «Մայրաքաղաքը վրէժխնդիրները, ծայրայեղ թաւիշականները ոչինչ չեն անում երկիրը այս փոսից, այս խառնաչփոթից, այս քառսից հանելու համար: Լուծումը քաղաքական է»:

13 Տարի Անց Նոյն Ուժերը Կրկին Պատերազմ Են Յայտարարել . Արման Բաբաջանեան

Եթէ բուն դրուած նպատակը կարողանանք ախտորոշել, ապա, կարծում եմ, այսօր՝ Մարտի 1-ից 13 տարի անց, մեզ անելի հեշտ կը լինի հասկանալ դրուած նպատակն իր գործն արեք, թէ ոչ, եւ արդեօք իրագործուել է այդ նպատակը, թէ ոչ: Այս մասին «Առաջին Լրատուական»-ի հետ զրոյցում նշած է «Յանուն Հանրապետութեան» ղեկավար մարմնի անդամ, ԱԺ պատգամաւոր Արման Բաբաջանեանը:

«Որովհետեւ հիմա, յատկապէս այս օրերին տեղի ունեցող լոյսի ներքոյ 13 տարի առաջ տեղի ունեցածը բոլորովին այլ իմաստ ու նշանակութիւն է ստանում այն իմաստով, որ 13 տարի առաջ էլ թիրախն իրականում առանձին ցուցարարները չէին, որոնք սպանուողներին փաստացի պատերազմի մէջ գտնուող երկրի բանակի ներքաւումամբ: Թիրախը 13 տարի եւս ՀՀ քաղաքացին էր, ՀՀ ժողովուրդն էր, ՀՀ ժողովուրդի իշխանութիւնն էր: 13 տարի առաջ գրեթէ նոյն ուժերը, որոնք այսօր պատերազմ



ԱԺ պատգամաւոր Արման Բաբաջանեան

են յայտարարել ժողովրդին եւ ժողովրդի իշխանութեանը, փորձ արեցին 10 քաղաքացու զնդակահարմամբ յաղթահարել ժողովրդի իշխանութիւնը: 13 տարի առաջ եւս ժողովուրդը միայնակ յաղթահարեց այդ մարտահրաւէրը», - ըսած է Արման Բաբաջանեան:

Անդրանիկ Քոչարեան. Զինուած Ուժերը Միայն Այդ Յայտարարութեան Տակ Ստորագրածները Չեն

ՀՀ Ազգային ժողովի «Իմ Քայլը» խմբակցութեան պատգամաւոր Անդրանիկ Քոչարեանի կարծիքով՝ Գլխաւոր Շտաբի ղեկավարութեան մէկ մասը ռազմական լեղաշըջման փորձ կ'ընէ, սակայն ԶՈՒ-ն միայն վարչապետի հրաժարականի պահանջով յայտարարութեան տակ ստորագրած անձինք չեն: «Արմէնփրես»-ի հաղորդմամբ՝ Քոչարեան նման տեսակէտ յայտնած է ԱԺ-ի յայտարարութիւններու ժամանակ:

«Ընդդիմութեան կողմից վերջին օրերին հրահրուած հանրահաւաքների ընթացքում եւերի իտալատուրովը ողջունում էր ԳՇ-ի՝ վարչապետի հրաժարականը պահանջելու վերաբերեալ յայտարարութիւնը», - ըսած է Քոչարեան:

Ըստ Քոչարեանին՝ հիմա՝ յետպատերազմեան այս բարդ վիճակին, քաղաքական նպատակներով բանակը չօգտագործելու կոչեր ընելու փոխարէն՝ ինչհատուրովը փաստօրէն կ'ողջունէ զանոնք:

«Ակնյայտ է, որ բանակին քաղաքական գործընթացների մէջ ներքաշելը նախապէս մտածուած է եւ դիտաւորեալ է արւում՝ ներքին անկայունութիւն ստեղծելու նպատակով: Նախքան ԳՇ յայտարարութիւնը, ընդդիմութիւնը բանակի զօրավարներին եւս մեղադրում էր պարտութեան մէջ, սակայն այժմ ընդդիմադիրները կորուկ փոխել են պարտութեան վերաբերեալ իրենց դիրքորոշումը՝ մեղադրելով միայն քաղաքական իշխանութեանը», - ըսած է Քոչարեան:

Քոչարեան շեշտած է. «Զինուած ուժերը միայն այդ յայտարարութեան տակ ստորագրած զօրավարները չեն կամ զօրավարների մի մասը չեն, այլ նաեւ զի-

նուորները եւ սպայակազմը, որոնք հերոսաբար 44 օր իրենց ուսերին կրեցին պատերազմի դժուարութիւնները: ԳՇ ղեկավարութեան մի մասը՝ իշխանութիւնը տապալելու նպատակով, բացառապէս ռազմական լեղաշըջման փորձ է անում, որը պէտք է խստօրէն դատապարտուի»:

Ըստ Քոչարեանին՝ բանակը հիմա Պաշտպանութեան նախարարի գլխաւորութեամբ պէտք է աշխատի հրադադարի ռեժիմի պահպանման եւ Զինուած ուժերու վերականգման անսասան իրականացնելու ուղղութեամբ: «Իսկ մեզ համար գլխաւոր խնդիրն է ներքին անվտանգութեան եւ կայունութեան ապահովումը», - եզրափակած է պատգամաւորը:

ԼՈՒՐԵՐ

Փաշինեան Եկած Է Եզրակացութեան, Որ «Իսքանտարներու» Կիրառման Մասին Ծիշդ Չէ Զեկուցուած, Յայտարարած Է Խօսնակը



Ռուսական «Իսքանտար» հրթիռներու համակարգը

«Իսքանտարի» մասին Հայաստանի վարչապետի օրեր առաջ ըրած յայտարարութիւնը մեծ ազդեցութեամբ բարձրացուցած էր Մոսկուայի մէջ: Մարտ 1-ին, Հայաստանի վարչապետի խօսնակը յայտարարած է, թէ Նիկոլ Փաշինեան եւ ՌԴ նախագահ Վլատիմիր Փութին վերջերս կապուած հեռախօսակցոյցի ընթացքին, ի թիւս այլ հարցերու քննարկած են նաեւ Հայաստանի կողմէ «Իսքանտար» համակարգի կիրառման վերաբերեալ վարչապետի յայտարարութիւնը:

«Հայաստանի վարչապետն առկա փաստերի եւ տուեալներէ համադրութեան արդիւնքում եկել է եզրակացութեան, որ իրեն այս իրավիճակի առնչութեամբ ճիշդ չի գեկուցուել», - ըսած է Մանէ Գէորգեան:

Յիշեցնենք, որ նոյն այս ձեւակերպումը աւելի վաղ օգտագործած էր Ռուսաստանի պաշտպանութեան նախարարութեան ներկայացուցիչը՝ յայտարարելով, թէ ՀՀ վարչապետին մոլորութեան մէջ

ձգած են, եւ իրականութեան մէջ պատերազմի ժամանակ «Իսքանտար» չեն օգտագործուած:

«Աւելին» վարչապետի յայտարարութիւնը ոչ մի կապ չունի ռազմական եւ ռազմարդիւնաբերական համագործակցութեան ոլորտում հայ-ռուսական դաշնակցային յարաբերութիւնների բովանդակութեան ու որակի հետ: Կասկած չի յարուցում եւ այն հանգամանքը, որ ռուսական զէնքը լաւագոյններից է աշխարհում: Հայաստանի Հանրապետութիւնը շարունակում է սերտ համագործակցութիւնը Ռուսաստանի Դաշնութեան հետ ռազմական արդիւնաբերութեան եւ բարձր արհեստագիտութիւնների ոլորտներում եւ մտադիր է քայլեր ձեռնարկել այն էլ աւելի խորացնելու ուղղութեամբ», - նշած է Փաշինեանի խօսնակը:

«Շատ կարեւոր է, որ ճշմարտութիւնն այս հարցում վերականգնուի», - այսօր ի պատասխան ըսած է ՌԴ նախագահի մամուլի քարտուղար Տմիթրի Փեւքով:

Հայաստանի Զինուած Ուժերու Աղմկայարոյց Յայտարարութիւնը՝ Վարչապետի Եւ Կառավարութեան Հրաժարականի Պահանջով

Հայաստանի Զինուած Ուժերու Գլխաւոր Շտապը Փետրուար 26-ին հանդէս եկաւ յայտարարութեամբ մը, իր վճռական բողոքը կ'արտայայտէր «անհեռատես եւ չհիմնաւորուած պատճառներով ՀՀ զինուած ուժերի գլխաւոր շտապի պետի 1-ին տեղակալին պաշտօնից ազատման առնչութեամբ, որն իրականացուել է առանց Հայաստանի Հանրապետութեան Ազգային եւ պետական շահերը հաշուի առնելու» հիմնուելով միայն անձնական եւ յաւակնոտ զգացումներէրի վրայ»:

«Երկրի համար այսպիսի ծանր պայմաններում նման որոշումը հակապետական եւ անպատասխանատու քայլ է:

«ՀՀ վարչապետը եւ կառավարութիւնն այլեւս ի վիճակի չեն ընդունելու ատակ որոշումներ» հայ ժողովրդի համար այս ճգնաժամային եւ ճակատագրական իրավիճակում:

«ՀՀ զինուած ուժերը երկար ժամանակ համբերատար կերպով հանդուրժում էր գործող իշխանութեան կողմից զինուած ուժերը վարկաբեկելուն ուղղուած «գրոհ»

ները», սակայն ամէն ինչ ունի իր սահմանները:

«ՀՀ զինուած ուժերը պատուով է կատարել իր պարտքը, իր ժողովրդի հետ ուսուսի մարտնչել թշնամու դէմ:

«Գործող իշխանութիւնների անարդիւնաւէտ կառավարումը եւ արտաքին քաղաքականութիւնում ցուցաբերած լրջագոյն սխալները երկիրը հասցրել են կործանման եզրին», - ըսուած է յայտարարութեան մէջ, զոր իր Դիմատետրի էջին վրայ հրատարակած է ԶՈՒ գլխաւոր շտապի տեղեկատուութեան բաժնի պետ՝ Սամուէլ Ասատրեան:

«Ստեղծուած իրավիճակով պայմանաւորուած՝ Զինուած ուժերը «պահանջում են ՀՀ վարչապետի եւ կառավարութեան հրաժարականը, միաժամանակ նախագուշացնում՝ ձեռնպահ մնալ ժողովրդի դէմ ուժ կիրառելուց, ում գաւակները գոհուել են՝ պաշտպանելով Հայրենիքն ու Արցախը»:

«Բանակը միշտ եղել է ժողովրդի հետ, ինչպէս ժողովուրդն է բանակի հետ», - ըսուած էր յայտարարութեան մէջ:

Արցախի Ազգային Ժողովը Յայտարարեց Որ, Արցախի Տարածքները Կը Նկատուին Գրաւուած Ատրպէյճանի Կողմէ

Արցախի Հանրապետութեան Ազգային Ժողովը Մարտի 1-ին յայտարարութիւն ընդունած է Արցախի Հանրապետութեան Ատրպէյճանի վերահսկողութեան տակ գտնուող տարածքներու իրաւական կարգաւիճակի վերաբերեալ: Յայտարարութիւնը Աժ արտահերթ նիստին ներկայացուցած է «Արցախի ժողովրդավարական կուսակցութիւն» խմբակցութեան ղեկավար Դաւիթ Մեղրումեանը:

Յայտարարութեան մէջ մասնաւորապէս ըսուած է.

«Արցախի Հանրապետութեան Ազգային Ժողովը վերահաստատում է, որ 1991 թուականի Սեպտեմբերի 2-ին՝ Լեռնային Ղարաբաղի անկախութիւնը հռչակուել է ԽՍՀՄ օրէնսդրութեան եւ միջազգային իրաւունքի նորմերի հիման վրայ: Արցախի Հանրապետութիւնը 1992-94 թթ. հետ է մղել Ատրպէյճանի Հանրապետութեան սանձազերծած ազրեսիան՝ ուղեկցուած միջազգային, հումանիտար իրաւունքի բազմաթիւ խախտումներով: Արցախի Հանրապետութիւնը՝ որպէս հակամարտութեան կողմ, տարբեր ձեւաչափերով մասնակցել է 1992-2020 թթ. ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում իրագործուող բանակցութիւններին՝ տարածաշրջանային կայունութեան ապահովման եւ Ղարաբաղեան հակամարտութեան խաղաղ կարգաւորման նպատակով:

«Ատրպէյճանի Հանրապետու-

թիւնը, խախտելով ԵԱՀԿ Մինսկի խմբի եւ համաձայնագրի պետութիւնների առջեւ ստանձնած՝ ուժի եւ ուժի սպառնալիքի կիրառումից հրաժարուելու պարտաւորութիւնները, 2020 թուականի Սեպտեմբերի 27-ին լայնածաւալ ռազմական գործողութիւն է ձեռնարկել Արցախի Հանրապետութեան դէմ, որին զոհ են զնացել հազարաւոր մեր հայրենակիցներ՝ ինչպէս խաղաղ բնակչութեան շրջանում, այնպէս էլ՝ Պաշտպանութեան Բանակի շարքերից, միտումնաւոր ոչնչացուել են Արցախի Հանրապետութեան քաղաքացիական ենթակառուցումներ ու մշակութային ժառանգութիւնը:

Հիմք ընդունելով վերը նշուած իրողութիւնները՝ Արցախի Հանրապետութեան Ազգային Ժողովը յայտարարում է՝ մինչ այս պահը Ատրպէյճանի վերահսկողութեան տակ յայտնուած՝ Արցախի Հանրապետութեան տարածքները համարուում են բռնազաւթուած, օկուպացուած՝ Ատրպէյճանի Հանրապետութեան կողմից:

«Արցախի Հանրապետութեան նկատմամբ Ատրպէյճանի իրականացրած ազրեսիան եւ նշուած տարածքների բռնազաւթումը որեւէ իրաւական ազդեցութիւն չեն կարող ունենալ ապագայ բանակցութիւնների ընթացքում՝ Արցախի Հանրապետութեան կարգաւիճակի եւ սահմանների որոշման գործընթացում»:

Սասնայ Ծռերու Անդամները Դատապարտուեցան 5-էն 25 Տարուայ Ազատազրկման

Երեւանի ընդհանուր իրաւասութեան դատարանը հրատարակեց «Սասնայ Ծռեր» խումբի անդամներու գործով դատաւճիռները:

Դատարանը Փաւլիկ Մանուկեանի նկատմամբ պատիժ նշանակեց ազատազրկում 10 տարի ժամկէտով: Նշանակուած պատիժն մէջ հաշուելով նախաքննութեան եւ դատաքննութեան ընթացքին կալանքի տակ գտնուելու ժամկէտը՝ վերջնական պատիժ նշանակեց 7 տարի 8 ամիս ժամկէտով ազատազրկում:

Վարուժան Աւետիսեան դատապարտուեցաւ 9 տարի 6 ամիս ժամկէտով ազատազրկման: Նշանակուած պատիժն մէջ հաշուելով նախաքննութեան եւ դատաքննութեան ընթացքին կալանքի տակ գտնուելու ժամկէտը՝ վերջնական պատիժ նշանակուեցաւ 7 տարի 4 ամիս ազատազրկում:

Մխիթար Աւետիսեան դատապարտուեցաւ ազատազրկման 9 տարի 6 ամիս ժամկէտով, վերջնական պատիժ նշանակուեցաւ ազատազրկում 7 տարի 6 ամիս ժամկէտով:

Էտուարտ Գրիգորեան դատապարտուեցաւ 8 տարի 6 ամիս ժամկէտով ազատազրկման, վերջնական պատիժ սահմանուեցաւ 6 տարի 6 ամիս ազատազրկում:

Գաբիկ Եղիազարեան դատապարտուեցաւ 9 տարի 6 ամիս ժամկէտով ազատազրկման, վերջնական պատիժ նշանակուեցաւ 7 տարի 5 ամիս ժամկէտով ազատազրկում:

Արեգ Կիւրեղեան դատապարտուեցաւ 9 տարի ժամկէտով

ազատազրկման, վերջնական պատիժ նշանակուեցաւ 7 տարի 1 ամիս ժամկէտով ազատազրկում:

Սեդրակ Նազարեան դատապարտուեցաւ 10 տարի ժամկէտով ազատազրկման, վերջնական պատիժ նշանակուեցաւ 8 տարի 2 ամիս ժամկէտով ազատազրկում:

Արմէն Պիլեանի նկատմամբ պատիժ նշանակուեցաւ ազատազրկում 9 տարի 6 ամիս ժամկէտով, վերջնական պատիժ նշանակուեցաւ 4 տարի 11 ամիս ժամկէտով ազատազրկում:

Սմբատ Բարսեղեան դատապարտուեցաւ 25 տարի ժամկէտով ազատազրկման: Նշենք, որ Բարսեղեանի համար դատախազները պահանջած էին ցմահ ազատազրկում:

Խումբի անդամներէն Արայիկ Խանդոյեանի նկատմամբ յարուցուած քրէական հետապնդումը դադարած է՝ անձի մահուան հիմքով:

Յիշեցնենք, որ «Սասնայ Ծռեր»-ը մեղադրուած են խումբ մը անձերու կողմէ ապօրինի կերպով գէնք, ռազմամթերք, պայթուցիկ նիւթեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելու, յափշտակելու, պատանդ վերցնելու, գոյքը դիտաւորութեամբ ոչնչացնելու, շէնքեր, շինութիւններ, փոխադրային, հաղորդակցութեան կամ կապի միջոցներ գաւթելու համար: Անոնք 2016 թուականի Յուլի 17-ին գրաւած էին Ռոստիկանոյսնութեան ՊՊԾ գունդը, որու ժամանակ գոհուած էր ոստիկանութեան փոխգնդապետ՝ Արթուր Վանոյեան: Հետագային նաեւ մահացած էին ոստիկաններ Գաբիկ Մկրտչեան եւ Իւրի Տեփանոսեան:

Փաշինեան Յայտարարեց Որ Պատրաստ Է

Շարունակուած էջ 1-ԷՂ

խօսեցաւ սահմանադրական փոփոխութիւններու մասին:

Նիկոլ Փաշինեան շեշտեց, թէ այն Գլխաւոր Շտաբի պետը, որ կ'ընէ քաղաքական յայտարարութիւններ, պէտք է հեռանայ: «Ընդ որում, այդ յայտարարութիւնն անում է Սերժ Սարգսեանի եւ նախորդ իշխանութիւնների՝ Հանրապետականների դրդամբ, ովքեր ուզում են 2008 թուականի նման ժողովրդական կամքը խեղդել թանկերի թրթուրների տակ, ՀՀ-ն նման Գլխաւոր շտաբի պետ չի կարող ունենալ:

«Այս հանգամանքն ամենեւին Զինուած ուժերում վրէժների հիմք չպէտք է տայ, փառք Աստուծոյ, այս պահի դրութեամբ, Զինուած ուժերը եւ Օննիկ Գասպարեանը կարմիր գծեր չեն հատել, եւ ես ուզում եմ համոզուել յայտնել, որ չեն էլ հատի, բայց անխուսափելիօրէն, կրկնում եմ՝ Օննիկ Գասպարեանը պէտք է հեռանայ Գլխաւոր շտաբի պետի պաշտօնից: Բայց ուզում եմ ասել նաեւ, որ Զինուած ուժերում, այո, վրէժներ չեն լինելու, որովհետեւ կապ չունի՝ ով է ստորագրել այդ թուղթը, ով չի ստորագրել, որոշումն այդ թուղթը սեղանին դնելու եւ այդ ստորագրութիւնների գործընթացը սկսելու կայացրել է Օննիկ Գասպարեանը Սերժ Սարգսեանի դրդամբ, եւ չեմ ուզում ասել հրամանով:

«Ես ուզում եմ ուղիղ ասել, այստեղ ուղիղ պիտի ասեմ, որ երբ որ իմ կողմից նշանակուած Գլխաւոր շտաբի պետը կատարում է մերժումներ հրամանները, այ դա ամենամեծ դաւաճանութիւնն է, այ էտ ա դաւաճանութիւնը, բայց էլի եմ ասում՝ թուղթը, եկէք ճիշդ հասկանանք, որը դրուել է սեղանին գորավարների ստորագրութեան համար, այդ թուղթը դրել է, եւ առնուազն այդ առաջարկը այլ գորավարների արել է Օննիկ Գասպարեանը, ստորագրելուց յետոյ այդ թուղթը հրապարակելու որոշումը նոյնպէս կայացրել է Օննիկ Գասպարեանը: Եւ ես էլի ասում եմ՝ Օննիկ Գասպարեանը պէտք է հեռանայ, միւսները պէտք է վերադառնան իրենց ծառայութեան»:

Նիկոլ Փաշինեան յայտարարեց, որ պատրաստ են երթալ արտահերթ խորհրդարանական ընտրութիւններու, եթէ առաջարկը ընդունուի խորհրդարանական ուժերու կողմէ:

«Արտահերթ ընտրութիւնների վերաբերեալ մեր ձեւակերպած առաջարկը խորհրդարանական ուժերի կողմից ընդունուելու պարագայում, մենք կը համաձայնուենք արտահերթ խորհրդարանական ընտրութիւնների, որովհետեւ համոզուած ենք, որ մեր ժողովուրդը իր ազատ կամարտայայտմամբ ի վիճակի է Հայաստանում հաստատել օրինական իշխանութիւն», - նշեց վարչապետը»:

Վարչապետը աւելցուց, որ ընդդիմադիրները օգտագործած են բոլոր հնարաւորութիւնները հրապարակներուն վրայ ի ցոյց դնելու, որ ժողովուրդը կը պահանջէ իր հրաժարականը: «Նրանք չկարողացան դա անել, ես տալիս եմ երկրորդ հնարաւորութիւնը եւ նետում եմ այս մարտահրավերը, եկէք գնանք ժողովուրդի առջեւ նոր ընտրութեան, տեսնենք ում հրաժարականն է պահանջում ժողո-

վուրդը», - նշեց ան:

Փաշինեան աւելցուց, որ ընտրութիւններ կատարելու պատրաստակամութիւնը մէկ նպատակ ունի: «Ինչքան էլ մենք մասնակցենք կարգախօսներով, ճառերով, խոստումներով, մենք այդ ընտրութիւններում մեր յղթանակը չենք փնտռելու, մենք այդ ընտրութիւններում փնտռելու ենք ձեր յղթանակը, որովհետեւ դուք պէտք է յղթէք», - ըսաւ վարչապետը:

Սահմանադրութիւնը, ըստ Նիկոլ Փաշինեանին, բազմաթիւ ճգնաժամային վտանգներ կը ստեղծէ: Վարչապետը կը կարծէ, որ ժամանակն է արձանագրել, որ պէտք է փոփոխել զայն:

«Այս տարուայ հոկտեմբեր ամսին համաժողովրդական հանրաքուէով ընդունենք նոր Սահմանադրութիւն կամ սահմանադրական փոփոխութիւններ, եւ ի վերջոյ կիսանախագահական կառավարման համակարգի անցնելը հնարաւոր տարբերակներից մէկը պէտք է լինի, եւ այս գործընթացը մենք պիտի իրականացնենք Ազգային ժողովի, կառավարութեան, հանրապետութեան նախագահի, քաղաքական ուժերի եւ քաղաքացիական հանրութեան հետ սերտ համագործակցութեան պայմաններում:

«Իսկ մինչ դա կան յօդուածներ մեր Սահմանադրութեան մէջ, որոնց փոփոխումը չի ենթադրում համաժողովրդական հանրաքուէ, եւ դա կարելի է փոխել Ազգային ժողովում տեղի ունենալիք քուէարկութեան միջոցով: Առաջիկայ մէկ ամսուայ ընթացքում մենք պէտք է նոյն ձեւաչափերով կառավարութիւն-Ազգային ժողով-հանրապետութեան նախագահ-քաղաքական ուժեր, աշխատենք լաւարկելու համար այն յօդուածները, որոնք լաւարկելու հնարաւորութիւն կայ Ազգային ժողովում տեղի ունեցած քուէարկութիւններին եւ խորհրդակցութիւնների արդիւնքում: Սա մի աշխատանք է, որը պիտի անենք», - ըսաւ Փաշինեան:

Փաշինեան կարեւոր նուաճումներէն մէկը համարեց ժողովրդի կողմէ իշխանութիւն ձեւաւորելու իրաւունքը: ՀՀ վարչապետը նշեց, որ այն բոլոր ճգնաժամերը, որոնք առկայ են, պէտք է լուծուին ոչ թէ ժողովրդի սահմանադրական իշխանութեան հաշուին, այլ հակառակը՝ ժողովուրդի իշխանութեան վերահաստատմամբ:

«Իշխանութիւն ձեւաւորելու ժողովուրդի իրաւունքը ոչնչով չպէտք է վտանգուի, այլ ընդհակառակը պէտք է ուժեղանայ: Այսինքն՝ ՀՀ-ում միայն ժողովուրդը պէտք է որոշի ով լինի իշխանութիւն եւ ով չլինի: Մեր ընթացիկ ճգնաժամի առանցքը հենց սա է, ժողովուրդի իշխանութիւնն իր ձեռքից ուզում են խլել եւ մենք Հրապարակում հաւաքուել ենք աստու, որ դա թոյլ չենք տալու», - ըսաւ Նիկոլ Փաշինեան:

Հանրապետութեան Հրապարակի հանրահաւաքը աւարտեցաւ երթով: Նիկոլ Փաշինեան գլխաւորութեամբ երթը գալեց Մաշտոցի պողոտայ, Կորիւնի փողոց, Աբովեան փողոց երթուղիով, որու աւարտին Միասնիկեան արձանի մօտ ծաղիկներ գետեղուեցան»: 2008 թուականի Մարտ 1-ի իրադարձութիւններու զոհերու յիշատակը յարգելու համար:

Հայաստանի Ներքաղաքական Տագնապը

Շարունակուած էջ 1-ԷՂ

Սարգսեան մերժեց ստորագրել Գլխաւոր Շտաբի պետին հեռագրելու վարչապետի հրամանագիրը: Փաշինեան մնաց իր որոշումին վրայ եւ հրամանագիրը երկրորդ անգամ ըլլալով ուղարկեց նախագահին, որու լիազօրութիւններուն մէջ կ'իյնար այս անգամ որոշումը ուղարկել Սահմանադրական Դատարանի քննութեան: Սակայն, նախագահը առաւ խոհեմ որոշում՝ կանխելով սահմանադրական ճգնաժամը, որ կրնար տեսել երկար ժամանակ՝ մինչեւ Դատարանի վերջնական որոշումը:

Այսպիսով ՕԾԻԿ Գասպարեան ինքնաբերաբար կը դառնայ Գլխաւոր Շտաբի նախկին պետ ու կը մնայ որ ան ենթարկուի այդ իրաւական քայլին:

Հոս պէտք է յստակօրէն արձանագրել, որ զինուած ուժերը ուղղակի կամ անուղղակի ներքաշումը քաղաքական գործընթացներու մէջ ոչ միայն հակասահմա-

նադրական է, այլ սպառնալիք՝ Հայաստանի պետականութեան եւ ներքին կայունութեան: Երկրի Սահմանադրութեամբ յստակ արձանագրուած է որ, բանակի հրամանատարութիւնը կ'ենթարկուի քաղաքական ղեկավարութեան որոշումներուն եւ այստեղ չկայ վարչապետի որոշումներուն հետ համաձայնելու կամ չհամաձայնելու հարց: Նոյնպէս, բարձրաստիճան զինուորականները իրաւունք չունին հանդէս գալ քաղաքական յայտարարութիւններով ու հակադրուիլ իրենց գերագոյն հրամանատարին:

Մարտ 1-ի առթիւ կայացած հանրահաւաքի ընթացքին Փաշինեան պատրաստակամութիւն յայտնեց երթալու արտահերթ ընտրութիւններու: Այժմ հերթը խորհրդարանական ընդդիմադրութեան է, որպէսզի անոնք դրական արձագանգեմ վարչապետի առաջարկին ու այդպիսով առաջին քայլը առնուի դէպի իրավիճակի որոշակի կայունացում:

«ՄԱՍԻՍ»

Նախագահ Սարգսեանի Որոշումէն Ետք

Շարունակուած էջ 1-ԷՂ

Կէտով, Հանրապետութեան նախագահն առանձին դիմումով դիմելու է Սահմանադրական դատարան «Զինուորական ծառայութեան եւ զինծառայողի կարգավիճակի մասին» 2017թ. Նոյեմբերի 15-ի ՀՀ օրէնքի՝ Սահմանադրութեանը համապատասխանելու հարցը որոշելու խնդրանքով»:

Հայաստանի Հանրապետու-

թեան նախագահ՝ Արմէն Սարգսեանի Մարտ 2-ին հրապարակած յայտարարութեանէն յետոյ, Օննիկ Գասպարեան կը համարուի պաշտօնէն ազատուած:

Փաստաբան՝ Նորայր Նորիկեանի մեկնաբանութեամբ Օննիկ Գասպարեանն այլեւս իրաւասու է կատարել ԳՇ պետի պարտականութիւնները, քանի որ իրաւունքի ուժով ազատուած է պաշտօնէն:

Ուաշինկըն կը Շարունակէ Հետեւիլ

Շարունակուած էջ 1-ԷՂ

գսպուածութիւն ցուցաբերել եւ խուսափիլ իրավիճակը սրող ցանկացած գործողութենէ կամ բռնութենէ: Բոլոր կողմերուն կը յիշեցնենք ժողովրդավարութեան հիմնարար սկզբունքը՝ գինուած ուժերը պէտք է միջամտեն ներքին քաղաքականութեան: Միացեալ Նահանգները կայուն աջակցութիւն ցուցաբերած է Հայաստանի մէջ ժողովրդավարական գործընթացներու եւ հաստատութիւններու զարգացման: Եւ մենք կը շարունակենք աջակցիլ Հայաստանի ժողովրդավարութեան, ինքնիշխանութեան եւ կը յորդորենք անոր առաջնորդներուն իրենց տարաձայնութիւնները հարթել խղաղ ճանապարհով՝ յարգելով օրէնքի գերակայութիւնը, Հայաստանի ժողովրդավարութիւնը եւ անոր հաստատութիւնները», - յայտարարած է Փրայս:

Լրագրողը ճշդող հարց տուած է, թէ ինչպէ՞ս Պետական Բաժանմունքը կը գնահատէ ԶՈՒ գլխաւոր շտապի յայտարարութիւնը եւ արդե֞ք այն կը դիտարկուի որպէս ռազմական յեղաշրջում կամ յեղաշրջման փորձ:

Պետական Բաժանմունքի խօսնակը հարցը դիտարկած է միայն յեղաշրջման եւ ոչ թէ յեղաշրջման փորձի համաթեքսթով ու պնդած, թէ Հայաստանի մէջ տեղի ունեցողը չի համապատասխանը coup



ԱՄՆ-ի Պետական Բաժանմունքի խօսնակ՝ Նետ Փրայս

d'etat-ի չափորոշիչներուն, որոնք կը կիրառուին Պետական բաժանմունքներու կողմէ. - «Ինչպէս գիտէք, Պետական Բաժանմունքը յատուկ գործընթաց ունի՝ որոշելու՝ արդե֞ք ռազմական յեղաշրջում տեղի ունեցած է: Փետրուար 1-ին, երբ Պիրմայի ժողովրդավարական քաղաքացիական ղեկավարութիւնը տապալեցաւ գինուորականներու կողմէն, մենք տեղի ունեցածը գնահատեցինք, որպէս գինուորական յեղաշրջում: Ես այն ժամանակ յայտարարեցի, որ այդ բնորոշումը տալու համար Պետական Բաժանմունքը ունի երեք չափորոշիչ: Այս պարագային, անշուշտ, այդ չափորոշիչներէն որեւէ մէկը չկայ»:

Նոր Մտածելակերպ, Նոր Հայաստան Պարտութիւն եւ Պատեհութիւն

ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԻԹԵԱՆ

«Վեհ էակը պէտք է կարողանայ կրել պարտութիւնները եւ փախուստ չտալ անոնցմէ, որովհետեւ այդ ընտելով բացայայտած կ'ըլլայ մտքի պայծառութիւնը, մինչ փախուստ տալով՝ սրտի վախկոտութիւնը»:

Փիեթրո Արեթիմո

«Քաջ ըլլալ ծախողութեան պարագային, կը նշանակէ արժանի ըլլալ արհուրթեան. իմաստուն ըլլալ ծախողութեան պարագային, կը նշանակէ տիրել ճակատագրին»:

Ագնես Ռեփլիթ

Պէտք է խոստովանինք, որ Արցախեան այս վերջին պատերազմին մեր կրած պարտութիւնը ծանր հոգեվիճակի մատնեց մեզ եւ վստահ ենք նաեւ ամէն ազգասէր Տայ: Պէտք է խոստովանինք նաեւ, որ պարտութեան առթած ճնշումէն աւելի, մեզ կը մտատանջէ այն խայտառակ իրավիճակը, որուն ականատես կ'ըլլանք Հայաստանէն ներս: Մեր խորին համոզմամբ, անհատի կեանքին մէջ եւ կամ ազգի պատմութեան մէջ, յառաջընթաց կ'արձանագրեն անոնք, որոնք դասեր կը քաղեն ամէն մէկ պարտութիւնէ կամ ձախողութիւնէ եւ պատեհութիւնը կը ստեղծեն վերականգնելու կորսուածը: Մեր այս համոզման բոլորովին հակառակն է, որուն ականատես կ'ըլլանք Հայաստանէն ներս: Ինչպէս որ անցնող աւելի քան երկու տասնամեակներուն, պատեհապաշտ մարդիկ շահագործեցին Արցախեան առաջին պատերազմի յաղթանակը յօգուտ իրենց գրպաններուն, այսօր ալ կը շահագործեն պարտութիւնը, դարձեալ յօգուտ իրենց շահերուն: Այս ընթացքով, մենք դուրս լայն կը բանանք նորանոր արդէներու առջեւ: Մենք հոն դժբախտաբար չենք տեսներ հինգ դարեր առաջ ապրած Փիեթրո Արեթիմոյի նշած մտքի պայծառութիւնը եւ ոչ ալ մօտ հարիւրամեակ մը առաջ ապրած Ագնես Ռեփլիթի նշած իմաստութիւնը, յաղթահարելու համար պարտութիւնն ու ձախողութիւնը եւ տէրը դառնալու մեր ճակատագրի կերտման:

Մեր այս յօդուածով պիտի առաջարկենք, որ ի՞նչ ուղիով պէտք է ընթանալ, յաղթահարելու այս պարտութիւնը, տնօրինելու մեր ճակատագիրը եւ կերտելու արժանապատիւ ապագայ մը: Դժբախտաբար, մեր կատարելիք առաջարկները բոլորովին նորութիւններ պիտի չըլլան, այլ արագ վերաբաղ մը այն գլխաւոր իրականութիւններուն, որոնք բարձրաձայնած էինք անցած մօտ երեք տասնամեակներուն մեր հրատարակած յօդուածներով: Կը յուսանք, որ Արցախեան առաջին պատերազմի յաղթանակի բերկրութեան (euphoria) ազդեցութեան տակ անտեսուած մեր առաջարկները, այս երկրորդ պատերազմին մեր կրած պարտութեան լոյսին տակ կ'արժանանան ուշադրութեան: Այս պարտութիւնը սթափեցնող ապտակ մը պէտք է ըլլայ բոլորիս համար, վերատեսութեան ենթարկելու մեր մտածելակերպն ու գործելաձեւը:

Ահա ստիկ մեր գլխաւոր առաջարկները:

-Սերունդներու Պատասխանատուութեան Գիտակցութիւնը
Մենք կը հաւատանք, որ ամէն մէկ սերունդ, որպէս մէկ օղակը հայ

ժողովուրդի պատմութեան երկար շղթային, պարտաւորութիւնը ունի իր նպաստը բերելու այդ շղթայի ամրակայման: Այդ գծով յաջողութեան հասնելու համար, ամէն մէկ անհատի մտածելակերպին մէջ պէտք է ամրագրուի հետեւեալ հարցումը: «ԵՍ ի՞նչ կրնամ ընել ԱԶԳՒՍ համար»: Մեր անձնականէն անդին, ազգին ալ օգտակար հանդիսանալու պատասխանատուութեան գիտակցութիւնը պէտք է ամրապնդուի մեր մէջ: Մայիս 6, 1995-ին «Մասիս»-ի մէջ հրատարակուած մեր «Սերունդներու Պատասխանատուութիւնը» յօդուածին մէջ կը գրէինք. «Ամէն մէկ սերունդ պատասխանատու է պատմութեան շղթայի իր օղակին... Ուրեմն գիտակցինք մեր տկարութեանց ու սրբագրենք զանոնք: Բայց մանաւանդ գիտակցինք մեր զօրութեանց: Մենք գորաւոր ժողովուրդ ենք: Այլապէս այսօր գոյութիւն պիտի չունենայինք, ինչպէս այսօր գոյութիւն չունին ժամանակին մեզմէ շատ աւելի ուժեղ եղած ազգեր... Պատմական առաքելութեան մը առջեւ կը գտնուի մեր սերունդը: 1988-ով սկսած մեր ազգային նորագոյն Զարթօնքը երկար ճամբայ ունի կտրելիք մինչեւ իրականացումը մեր անկատար երազներուն: Այստեղ դարձեալ կ'արժէ մէջբերել վաղամեռիկ բանաստեղծ Պետրոս Դուրեանի քիչ թեան վերջին քառատողը, առանց մեկնաբանութեան.

Յէք մարդկութեան մէկ ոսող
գօս՝
Հայրենիք մը ունի՞ք թշուառ,
Զ'օգնած անոր՝ մեռնի՞լ անց-
շան,
Ոհ, ա՛յս է սոսկ ցա՛ւ ինձ հա-
մար:

-«Ամբողջ»ի Արժէքին Ընկալումը

Երբ ակնարկ մը կը նետենք հազարամեակներու մեր պատմութեան վրայ, բացայայտ կը դառնայ, որ հոն ուր առաջնորդուած ենք «ամբողջ»ի, այսինքն հայ ազգի շահերով, մենք յաղթանակներ կերտած ենք: Իսկ հոն ուր «մաս»ի, այսինքն անհատի-տոհմի-կուսակցութեան շահերը գերադասուած են, ապա անպայմանօրէն տուժած է «ամբողջ»ը: Յունուար 4, 2003-ին հրատարակուած մեր «Ամբողջ եւ Մաս» յօդուածին մէջ կը նշէինք. «Փոխանակ ժողովուրդին մէջ զարգացնելու «ամբողջ»ի՝ ազգային ոգիի գիտակցութիւնը, զայն միւրձեցինք վարչակարգերու եւ գաղափարախօսութեանց լաբիլիթիթոսին մէջ ու մասնատեցինք: Բաժան-բաժան ըրինք ժողովուրդը, որպէսզի ստեղծենք մեր մենաշնորհեալ ազարակները»: Մեր այս տկարութիւնը դարձանելու անհրաժեշտութեան անդրադարձած ենք շատ մը յօդուածներով, ինչպէս՝ «Անձնասիրութիւնէ դէպի ազգասիրութիւն», «Հասկնանք գիրար», «Ոսօքն ալ կը սպաննէ», «էականը», եւ այլն: Այս վերջինին մէջ կը նշէինք, որ հայ ազգի «մեծերը յաւերժացան, որովհետեւ անցողակիցն անդին ձգտեցան ծառայել յաւերժին: Անոնք յաւերժացան, որովհետեւ իրենց անձէն անդին, ձգտեցան ծառայել հասարակութեան, ժողովուրդին, ազգին: Անոնք մեզի աւանդեցին, որ երբ անձը կը հաշտեցնեն ազգիդ հետ եւ

կ'ապրիս անով, ոչ միայն զարկ տուած կ'ըլլան անձնականիդ զարգացման, այլ նաեւ ազգիդ: Բայց երբ անձիդ զարգացման համար կ'արհամարհեն ու կ'անտեսեն շրջապատդ, կամ կը փորձեն յառաջդիմել ի հեճուկս հայրենակիցիդ ոտնակոխման, նպաստած չես ըլլար անձիդ ու ազգիդ երկարաժամկետ շահերուն: Դժբախտաբար այս գիտակցութիւնը տակաւին չէ ընկալուած մեր ազգը առաջնորդել յաւակնող ղեկավարներու կողմէ: Այլապէս ականատես պիտի չըլլայինք այն դէպքերուն որոնք կը պատահին:

-Ազգային Արեւելումի Հիմնականութիւնը

Զանազան յօդուածներով շեշտած ենք ազգային արեւելում ունենալու հիմնականութիւնը մեր անկախ ճակատագրի կերտման գործընթացին մէջ: Հայաստանի անկախութեան 4րդ տարեդարձին առթիւ Սեպտ. 23, 1995-ին հրատարակուած մեր «Ազգային Արեւելում» յօդուածին մէջ կը գրէինք. «Զտարուինք սին ու երազային խոստումներէ եւ յույսերէ, ուրկէ որ ալ գան ատոնք. Ո՛չ արդարութիւն հայցենք աջէն ու ձախէն եւ ո՛չ ալ յետոյ, յուսախաբ ու վիրաւոր թընենք այդ արդարութեան երեսին: Այլ՝ գիտակցինք, որ այդ արդարութիւն ըստուածը ուղակիօրէն կ'ապուած է մեր ուժին: Կ'ամբարձրենք այդ ուժը՝ կը պահանջենք ու կը տիրանանք մեր իրաւունքներուն: Չե՞նք ամբարձրէ՞ր մեր պահանջը կը դառնայ ծիծաղելի, կը խեղճանանք ու կ'արհամարհուինք աջէն ու ձախէն»:

-Ինքնախաբէտութիւնէ Զերբազատուելու Անհրաժեշտութիւնը

Ծանր է ընդունիլը, որ ազգովին կը տառապինք ինքնախաբէտութիւնէ, բայց անհրաժեշտ քայլ մըն է այդ ընելը, որպէսզի առաջըր առնենք մեր կրած դժբախտութեանց եւ տակաւին մեզի սպառնացող վտանգներուն: Ազգովին չենք անդրադառնար, որ կը մսխենք անցեալէն մեզի հասած ժառանգութիւնը: Չենք անդրադառնար մեր թերիներուն եւ կը շարունակենք վատաբանել ու չհաւանիլ տարբեր ազգեր, որոնք մեզմէ դարեր ետք երեւացին պատմութեան թատերաբեմին վրայ եւ մեզմէ շատ առաջ անցած են: Յունուար 3, 2015-ին մեր հրատարակած «Ինքնախաբէտութիւնէ ինքնաճանչութիւն եւ անդին» յօդուածով կ'անդրադառնայինք մեր այս ազգային հիւանդութեան ու կը նշէինք. «Ամէն մէկ հայ պէտք է բարձրաձայն հարց տայ. «ա՞յս էր իմ Մեծ Երազը»: Դժբախտաբար հայութեան Զախձախիչ մեծամասնութիւնը բացասական պատասխան պիտի տայ այս հարցումին, Եղեռնի հետեւանքով պայենական հողէն տարագրուած հային մինչեւ վերջին տարիներուն Հայաստանէն արտագաղթած հայր: Ուրեմն բոլորս պարտինք բարձրաձայնել մեր դժգոհութիւնը այն բոլոր արատաւոր երեւոյթներու եւ արատաւոր մարդկանց դէմ, մանաւանդ ղեկավար դիրքերու վրայ գտնուողներուն, որոնք պատճառ կը դառնան համազգային յուսախաբութեանց»: Մեր այդ յօդուածին մէջ կը մէջբերէինք հաստատումներ Ռաֆֆիին, գրողւած 150 տարիներ առաջ, որ «ինքնախաբէտութիւնը բարոյական ինքնասպանութիւն է», որուն դարձմանը կը կայանայ ինքնաճանաչութեան մէջ:

Անոր շնորհիւ է, որ անհատին մէջ «առաջ է գալիս տոկոսն աշխատութիւնը, դա է ոգեւորում մարդուն դէպի անդադար առաջադիմութիւն. Դա է ծնում հանճարները, արհեստը, գիտութիւնը եւ աշխարհի բարօրութիւնը: Դժգոհութիւնը իր վիճակից՝ մի ազնիւ գրգիռ է, որ տանուծ է դէպի նրա բարուրդը»:

-Ժողովրդավարութեան եւ Օրէնքի Գերակայութեան Էականութիւնը

Հ. Բժշկեանց արդէն Կարմիր Բանակի զօրահրամանատար էր, սոցիալիստական յեղափոխութեան հաւատաւոր մարտիկ: Իր կազմակերպած եւ ղեկավարած զօրագունդը (տիւրկիս) կը կոչուէր «Երկաթեայ»՝ հոն տիրող երկաթեայ կարգապահութեան եւ խիզախութեան համար: Իր շնորհիւ կը հիմնուի կովկասեան հեծելազօրային Վայրի կարմիր զօրագունդը: Արդէն շրջապատուած է ռուս զինուորներով եւ անոնք Հայկ չեն կրնար ըսել, որովհետեւ «հ» տառը գոյութիւն չունի ռուսերէնի մէջ (կը հնչեն կ), ուստի՝ կը կոչուի Գայ: 1918-1920 թ. անընդհատ մարտերու մէջ է ռուսական տարբեր քաղաքներու մէջ: Ամէն տեղ ցոյց կու տայ փորձառու եւ տաղանդաւոր ռազմագէտի հմտութիւն եւ արիւթիւն: Զինք կը զրկէն արեւմտեան ռազմաճակատ, կը հասնի Ուքրանիա, Լեհաստան, Չեխիա եւ Գերմանիա: Իր փայլուն գործունէութիւնը կը գրաւէ ուշադրութիւնը խորհրդային ղեկավարներու:

Հակառակ օտար ափերու վրայ ունեցած հերոսական կռիւներուն, իր հօրենական եւ գաղափարական դաստիարակութիւնը չմոռցաւ երբեք: Հայրենիքն էր սրտին մէջ: «Երկաթեայ» զօրագունդը երբ գրաւեց Սիմպիրսք քաղաքը, զինուորները շրջապատուած էին զօրավարը եւ կ'ուզէին լսել անոր խօսքը. Գայ կը բարձրանայ ռազմակառքին վրայ եւ կը սկսի խօսիլ. ան անթերի գիտէր ռուսերէնը, բայց մարտիկները չէին հասկնար զինք: Գայը յուզումով հայերէն կը խօսէր. եւ երբ իր նկատողութեան կը յանձնեն, ան պահ մը կը լռէ եւ բարձրաձայն կ'ըսէ. «Ես հայ եմ, քաջեր, որդին տառապած ժողովուրդի մը, որուն դարեր շարունակ ուզած են ստրկացնել, ոչնչացնել, բայց ան գէնք վերցուցած է, բարձրացած իր անառիկ լեռներն ու կուրած իր հայրենիքն ու պատիւը փրկելու համար: Այստեղէն հեռու է Հայաստանը, իմ չքնաղ, իմ վեհ հայրենիքը, բայց կու գայ օրը, երբ «Երկաթեայ» տիւրկիսան վոլկայէն կը հասնի Արաքս...»: 1922-23 թ.

ԲԱՐՈՅԱԽՕՍԱԿԱՆ «ՃԱՆԱՀԵԼ ՄԱՐԴՈՒՆ» Պատմուածքն Ու Մասամբ Նորին

ՅԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ

- Նորութիւնն ասած չեմ լինի, եթէ կրկնեմ գիտականօրէն ապացուցուած այն միտքը թէ գիրքը, ընդհանրապէս կարգալից, ընթերցանութիւնը մարդու համար ոչ միայն հաճոյքի, վայելքի ու ժամանցի միջոց են, այլեւ աշխարհաճանաչողութեան, մշակոյթի, գիտութեան մասին ունեցած գիտելիքների պաշարը հարստացնելու, ի վերջոյ, մարդու միտքն ու հոգին նրբացնելու կենարար աղբիւր:

Այդ կենարար աղբիւրի ջուրը իմ գրականութեան մէջ հոսում է կարելոյն պարզ, ջինջ, արեւի ջերմութեամբ առլի, նրա հոտով արբեցած գոյներով: Իմ պատմուածքների մէջ թուում է թէ երկխոսութիւնն են վարում դիմացս նստած ընթերցողի հետ: Ես միշտ եմ նրա հետ: Աւելիին էս միշտ ինձ նրա տեղն եմ դնում ու կարգում իմ գրածը: Պատահում է, որ կարգալիս յուզմունքից աչքերս թրջւում են, ասել է թէ՛ ամէն ինչ ճիշդ է ստացուել, գրածս տեղ կը հասնի: Միշտ նպատակ է եղել ժողովրդային, պարզ պատկերներ հիւսել ընթերցողի համար՝ խոսակցելով ճոռոմաբանութիւնից, սակայն ի պահանջ տեղին պատկերներ հիւսել պերճաշուք, շքեղ լեզուով:

Իմ դառն մանկութեանը վերաբերող պատմուածքներով, թող անհամեստութիւն չթուայ, ես ինձ նմանեցնում եմ մեծանուն գրող, քաղաքական նշանաւոր գործիչ Աւետիս Ահարոնեանին, որի ժամանակին Երեւանի մեր տան գրադարանի գոյգ հատորները բազմիցս թերթատել եմ 7-8 տարեկան հասակից: Որքան էլ ժամանակին «յեղափոխական» համարուող հանճարեղ Ջարեանը նրան համարի «Լալկան» գրող, միեւնոյնն է՝ նրա պատմուածքներում ես ինձ եմ տեսնում, իմ Լալկան մանկութիւնը, որի ազդեցութիւնը երեւում է ոչ միայն իմ գրական գործերում, այլեւ իմ յորինած երաժշտութեան մէջ: Ի լրումն այս ամէնի, ԹԱԽԻԾՆ է իշխում իմ ողջ մտաւոր գործունէութեան մէջ: Ինչպէս կարող է այդպէս չլինել, երբ անօթի մերկ ու ստաբիլ երեխան կարդում է Աւետիս Ահարոնեանի «Պուտ մը կաթ» եւ «Փշուր մը խաց» (հաց) սրտմաշուկ պատմուածքները:

Շատ գրողներ, մանաւանդ բանաստեղծները, իրենց «հանճարեղ» մտքի առկայծումները թղթին չեն յանձնում դարերով ընդունուած, ամրագրուած օրէնքներով, այլ փորձում են որպէս գրելաձեւ, նորութիւն մտնել գրառման արտաքին տեսքի մէջ:

Օրինակները շատ են: Բերենք դրանցից մի քանիսը.

Հանգագուրկ (հանգ չունեցող), իրաքանչիւր տողի սկիզբը՝ փոքրատառով, «բանաստեղծութիւն»՝ իւրաքանչիւր տողին յատկացնելով մէկ բառ, մէկ ուրիշը՝ բանաստեղծութիւն է «կառուցում» տոնածառի տեսքով՝ վերից վար, իւրաքանչիւր տողում աւելացնելով մէկական բառ: Մէկ ուրիշ բանաստեղծ էլ իր գրուածքը «հարստացնում» է հոմանիշների բառարաններինց վերցուած դժուարամարս բառերով:

Ես բառարաններից օգտուում եմ այն ժամանակ, երբ ուզում եմ

համոզուել, որ նոր բառ եմ յորինել: Ինչպէս ասենք ԲԱՋՄԷՋ բառը, որը նշանակում է՝ մեծածաւալ, բազմաթիւ էջերով հարուստ, 2-3 կիլոգրամ կշռող հաստափոր գիրք:

- Գալով գրեթէ երկու ամիս առաջ դիմատետրի մէջ տեղադրուած եւ մամուլում հրատարակուած «Ճանաչել մարդուն» իրական պատմութեանը, հետաքրքրութիւնը պատմութեան հերոսի նկատմամբ չի նուազում: Ընկերներ ծանօթներ, հարազատներ, փորձուած են գուշակել իրական հերոսի անունը: Շատեր նեղանում են, վիրաւորում, որ ես ու Մարիտեան իրենց չենք վստահում գաղտնապահութեան մէջ: Թուարկում են մի շարք անուններ, բայց նրանում ոչ ոք չի հոլովում, որն ինձ շատ է ուրախացնում: Նշանակում է նա յարգուած ու սիրուած է շրջապատում: Ինչ էլ լինի, ես մտադրութիւն չունեմ նշաւակել (նախատինքի առարկայ դարձնել) նրա անունը, որքան էլ որ պախարակելի լինի նրա վարմունքը: Այսպէս կամ այնպէս «գնդակն իր դաշտում» է: միայն թէ պիտի չլինի, որ ՆԵՐՈՂՈՒԹԻՒՆ ինդերելը հերոսական քայլ է, իսկ ներողինը՝ կրկնակի ՀԵՐՈՍԱԿԱՆ:

Ամէն դէպքում հարկ եմ համարում երկու կարծիք ներառել սոյն գրութեան մէջ՝ կապուած «Ճանաչել մարդուն...» պատմուածքի հետ: Առաջինի հեղինակը դերասանուհի Բիւրեղիկ Մնչյանն է Հայաստանից, որը գրում է.

- Յաւոք, այսօր շատ կան Ձեր նկարագրած ժողովների նման շփացած մարդիկ, ովքեր թքած ունեն Հայրենիքի, գիր ու գրականութեան վրայ:

Երկրորդ դիտարկումն արել է երաժիշտ Նարինէ Դելալեանը՝ Իսպանիայից: Նա գրում է.

- Սիրելի պարոն Անասեան, ցաւոք, կայ նաեւ այս իրողութիւնը: Այնքա՛ն ձղձիմ, այնքա՛ն վիրաւորող:

Պատմուածքի հերոսի արարքից աւելի վատթարը կայ՝ կապուած վեց ամիս առաջ Երեւանում տպագրուած իմ «Արեւի հոտը» գրքի տարածման պատմութեան հետ:

«Արեւի հոտը» գրքի առաջին տպաքանակը նպատակային ձեւով սպառուեց, որովհետեւ սպառումից հաւաքուած գումարը փոխանցուելու էր ՀԱՅԱՍՏԱՆ հիմնադրամին՝ Ղարաբաղում մոլեգնած պատերազմի կարիքներին օգնելու համար: Այդ արշաւին մասնակից եղան իմ ընտանիքի բոլոր անդամները, մտերիմ ընկերներ, մի քանի լրագրող բարեկամներ: Չեղաւ եւ ոչ մի գրող-բանաստեղծ (բացի մի առականգրից), թէեւ նրանց ուղարկուած գրքի մէջ կար նամակ-բացատրագիր՝ գրքի սպառման նպատակի մասին, եւ, ամէնակարեւորը. ենթական նուիրատուութիւն պիտի անէր, ոչ թէ իմ անունին, այլ Հայաստան հիմնադրամին:

Ոգեւորուած նման յաջողութիւնից, երեւանցիներին խնդրեցի շտապ կարգով եւս մի ստուար քանակի գիրք ուղարկել: Սակայն, ափսոս, ծանրոցը հասաւ պատերազմի աւարտից երկու օր անց:

Դէ արի, մասետրօ, հիմա սփիւռեցանք այս առաջարկի գիրք գնել ի նպատակ վարկաբեկուած ՀԱՅԱՍՏԱՆ հիմնադրամի, երբ իր դրամներով վերաշինուած Արցախ

աշխարհից փՇՈՒՐԸՄ ՀՈՂ է ՄՆԱՑԷ...
-- Գիրք չկարդացողների մասին պատկերացումս կերպարանք առաւ 43 տարի առաջ, Լոս Անջելէս հաստատուելուց ճիշդ երկու ամիս անց, երբ դարձայ նորաստեղծ «Հայրուեստ» (հենց այդպէս, մէկ բառով՝ ՀԱՅԱՐՈՒԵՍ) երկշաբաթեայ թերթի խմբագիր: Թերթի առաջին համարը լոյս տեսաւ 1978թ. Հոկտ. 1-ին:

Պատմութեան համար չի շեղանեմ, որ դրանից հինգ օր անց, Հոկտ. 6-ին, թերթի կազմակերպութեամբ կայացաւ իմ առաջին համերգը, որի մենակատարներն էին համա-հայկական ճանաչման սանդղակի առաջին աստիճանին եղող Յարութ Փամբուկչեանը, երգչուհի Մարիտեա Անասեանը եւ անցեալ դարի 30-ականների վերջերին Հայաստանում լաւագոյնս ճանաչուած քանոնահար Արա Սեւանեանը: Համերգից յետոյ ներկայներին բաժանուեց «Հայրուեստ»-ի առաջին համարը:

Թերթի առաջին համարից 50-60 (միայն այդքան հասցէ կար ձեռքիս տակ) օրինակ հայրիկս, այդ մեծանուն պատմաբանն ու հայագէտը, տարաւ փոստի բաժանմունք: Մի քանի օր անց եկան պատասխանները:

Ի թիւս բաժանորդագրուողների, նրանց մէջ էր 1952 թուականից Լոս Անջելէսում հաստատուած, հայ համայնքի հիմնադիրներից Հրանտ Սիմոնեանը, որը խորախուսիչ մի նամակի հետ ուղարկել էր բաժանորդագրութեան գինը՝ 12 դոլարի փոխարէն՝ 20, որն այն ժամանակ այսօրուայ 100 դոլարի արժողութիւնն ունէր: Ինձ համար ամենարտառոցը երեք պատասխաններն էին: Առաջինը մերժում էր՝ «Մենք հայրենի չենք կարդում» նախադասութեամբ, երկրորդը՝ «Մեզ հայրենի թերթ մի դրկէք», երրորդը՝ «Ձեզի ո՞վ ըսաւ, որ մեզի թերթ դրկէք»: Միակ միւթա-

րական նամակի բովանդակութիւնը հետեւեալն էր. «Տղաք, մեր տունին մէջ հայրենի խօսող չկայ, կը դրկեմ բաժանորդագրութեան գինը՝ օգտակար ըլլալու համար ձեր թերթին»:

Դժբախտաբար այսքան տարիներ անց գրեթէ պատկերը նոյնն է, սակայն միւս կողմից էլ կան մարդիկ, որ ոչ միայն հարատեւօրէն կարդում են, այլեւ մէկ գիշերուայ ընթացքին ԼԱՓՈՒՄ են իրենց հոգուն հարազատ բովանդակութիւն ունեցող գիրքը:

Անշուշտ գիրքի բովանդակութեան «Լափելը» բնաւ նման չէ Սփիւռեցանային վարկաբեկող Նաիրի Ջոհրապեանի ակնարկած կերակուրի ԼԱՓԱՄԱՆԻՆ:

Ըստ այնմ էլ, որեւէ գրողի համար մեծագոյն երջանկութիւն է գիտենալ. որ իր գիրքը, նրա բովանդակութիւնը Լափողներ կան, եւ որ, ընթերցող հասարակութիւնը մշտապէս սպասումի մէջ է՝ մամուլի եւ թէ՛ Դիմատետրի մէջ կարգալու համար այդ հեղինակի նորանոր գրութիւնները:

Սոյն գրութեան տուն տուող առիթը տուեց օրերս ինձ ուղարկուած մի նամակի բովանդակութիւնը: Ահա մի քանի տող այդ նամակից.

- Սիրելի մասետրօ, ստանալով «Արեւի հոտը» անուն գիրքը, միանգամայն ԼԱՓԵՑԻ, քեզի հետ ապրեցայ, գմայլանքով կարդացի բոլոր գրութիւններդ, քո քաշած տառապանքները-, կանխալստ շնորհակալութեամբ կը սպասեմ, եթէ կարելի է միւս գիրքերէդ ալ ունենալ եւ կարդալ:

- Իհարկէ բարեկամս, կարելի է ունենալ եւ կարդալ: Անպայման կը դրկեմ: Ըսէ, թելադրէ գրքասէր բարեկամներու թող դիմեն ինձի, անոնց ալ կը դրկեմ, որովհետեւ, ինչպէս Աթաբէկ խնկոյեան կ'ըսէ՝ ԱՐԱՅՈՂԻ ԽՆԷՔՆ Է ԿՏՐՈՒԿ, ՄԻՏՔԸ ՊԱՅՄԱՆ ՈՒ ԼՈՒՍԱԻՈՐ...
«Երկաթայ» Գայլ (Յայկ Բժշկեանց)

«Երկաթայ» Գայլ (Յայկ Բժշկեանց)

Շարունակուած էջ 11-էն

կը նշանակուի Խորհրդային Հայաստանի գինուորական կոմիսար (նախարար). կը պատրաստէ գինուորականներու սերունդ մը: Իր ջանքերով Հայաստանի մէջ կը բացուի հրամանատարական դպրոց: Անդրկովկասի եւ Ռուսաստանի մէջ կը տանի պետական ու ռազմագիտական գործունէութիւն՝ 1927-1932 թ. դառնալով Ֆրունզէի անուն ռազմական ակադեմիայի ռազմական արուեստի պատմութեան ամպիոնի վարիչ, 1933-էն՝ Ժուկովի անուն պատերազմներու պատմութեան եւ ռազմական արուեստի ամպիոնի վարիչ: Ուստի, ան ոչ միայն օժտեալ ռազմավար էր, այլեւ՝ տեսական գիտելիքներով զինուած փայլուն գործիչ: Գրած է ռազմագիտական աշխատութիւններ, ուսումնասիրութիւններ, յօդուածներ եւ յուշեր: Նշենք, որ ան 1916-ին հետեւած էր սպայական դասընթացներու, 1920-22 թ. հրամանատարական դասընթացներու, 1927-ին՝ ռազմական ակադեմիա: Իր անունով փողոցներ եւ յուշարձաններ կան Ռուսաստանի տարբեր քաղաքներում մէջ: 11 Դեկտեմբեր 1937-ին, անհիմն բռնադատուելով կը զնդակահարուի ստալինեան վարչակարգին կողմէ: Բացառուած չէ, որ Ստալին հաւանական մրցակից մը կը տեսնէր Գայի ընդմէջէն:

Երեւանի մէջ կանգնած են հինգ ձիաւոր արձաններ.- Սասունցի Դաւիթ, Վարդան Մամիկոնեան, Գայ, Ջօր. Անդրանիկ եւ Մարաշախտ Յ. Բաղրամեան: Ամենահսկան եւ տպաւորիչը Գայի արձանն է, իր անուան պողոտային վրայ. կանգնած՝ 1978-ին (քանդակագործ՝ Սուրեն Նազարեան), Նոր Նորքի երկրորդ զանգուած թաղամասին մէջ: Քիչ անդին, Երեւանի թիւ 129 դպրոցը կոչուած է Գայի անունով, որուն մէջ կայ իրեն նուիրուած թանգարան: Հոն կը ջամբուի ռազմահայրենասիրական շեշտուած դաստիարակութիւն: Հոն ամէն տարի կը նշուի Գայի ծննդեան տարեդարձը: Դպրոցին պատասխանատուները հպարտութեամբ կ'ընդգրծեն, թէ շրջանաւարտները պատուով կը ծառայեն հայկական բանակին՝ ներշնչուած Գայի ոգիէն: Անոնք կը զանազանուին իրենց ռազմահայրենասիրական վարքագիծով եւ կը կոչուին՝ Գայականներ:

Ամէն հայու եւ յատկապէս հնչակեան ղեկավարի թէ շարքայինի ուխտավայրը պէտք է ըլլայ Գայի յուշահամալիրը: Մի'շտ պիտի խոնարհինք մեծ եւ աննկուն հայրենասէր ու զօրավար Հայկ Բժշկեանցի յաղթական յուշակոթոնին ընդառաջ: Այն տիտանին՝ որուն տարեդարձն է այսօր:

Փա'ոք «Երկաթեայ» զօրավարին՝ ԳԱՅ-ին:

«ԱՐԱՐԱՏ» ԼԻԲԱՆԱՆ

Այցելուքիւն Մարմարա Ծովի Իշխանաց Կղզիներ, Պուրսա



ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ

Կա՞յ արդեօք մի բնագավառ, որտեղ ցուլացած չլինեն հայ գեների միտքն ու հանճարը, որի գիւտերով, յայտնագործութիւններով ու արարումներով մարդկութիւնը առաջընթաց քայլ կատարած չլինի: Դժուար է պատկերացնել: Այդ նրանցով է աշխարհը ճանաչում հային ու աշխարհի քարտեզի վրայ հագիւ նշմարուող հայաստան երկիրը, որի աշխարհաճանաչ գաւակները վերստին փաստելու են հայոց գեների, հայ հանճարի երեւակայութեան ու մտքի թռիչքը՝ ի նպաստ համայն մարդկութեան:

1968 թուական, շարունակուել էր Խորհրդային Հայաստանի մի խումբ մտաւորականների թուրք-իա այցելութիւնը: Խմբից Մ. Աղայեան հետաքրքիր տեղեկութիւններ հաղորդել էր ժամանակի թուրքիա բնակած հայերի եւ տարբեր հարցերի մասին: Պատմութիւն է, նրա բոլոր ժամանակների տուեալները հետաքրքիր ու երբեմն էլ ուսանելի են:

Այցելել էին Մարմարա ծովի՝ Քնալը, Բուրգազ, Հէյբելի եւ Պէյուք Ատա կղզիներ: Ստամպուլի հարուստ ընտանիքներ իրենց ամառային հանգիստն են այնտեղ անցկացրել: Սկզբում այցելել էին կղզիախումբի ամենամեծ՝ Պէյուք Ատա կղզի: Այնտեղ արգելուած եղել էին քաղաքների երթեւեկութիւնը: Կղզում ճաշելու ատեն հանդիպումներ ունեցել այլ ազգերի մարդկանց հետ: Պատահաբար հանդիպել էին Երեւանի Պետական Համալսարանի Տնտեսագիտական բաժանմունքի ղեկավար ու դասախոս՝ Կարպիս Կարապետանի ազգականներին հետ, նա իրենց հիւրն եղել: Խնդրել էին պատմել Խորհրդային Հայաստանի մասին, արտասուել էին, խումբի մարդիկ զգացել էին թէ ինչքան մեծ զգացում է՝ «Հայրենասիրութիւնը, հապա հայրենասիրութեան կորուստը»: Վերադարձին Չերմանաւում հանդիպել մի ընտանիքի՝ անկրկնելի հայկական սրահայեացք, երկրի կորուստի ցաւից դէմքը խոցուած մեղամարտութիւն, դիմացի սրտի մէջ խրոտով տխուր խոշոր աչքեր, խօսքի մէջ անթեղուած կրակի շունչ, երկիր մնացած ցորեանի ծովակներ, բերքով լիքը հազար գոյնի այգիների հրացուք, ծառերին վարուող աստղիկներ, հասկացել նրանք հայեր էին, մօտեցնել՝ ողջոյն փոխանցել, ժպտացել էին: Նաւարկութեան ճանապարհին հիւստացել էին այդ կղզիների հմայքով, ծովում կանաչ այգիներ, մասնաւորապէս «Քնալը» կղզին՝ որտեղ

առաւելապէս հայերն էին հանգստանում, ստեղծուել էր հայկական համայնք, դարձել» Հայկական Կղզի»:

Խումբի անդամները հիւրընկալուել էին Պոլսահայ Յակոբ Սվազլեանի ընտանիքում: Ուրախացել էին հիւրընկալութեանը հանդիպելով Լիբանանի աննման մտաւորական Պէյուք Սիմոնեանին ու նրա տիկնոջ հետ, Պոլսում հրատարակուող «Պայքար» լրագրի աշխատակից օրիորդ Ատրինէ Տատրեանի հետ: Ճաշանդանի շուրջ հետաքրքիր զրոյց էր ծաւալուել: Այդ ընթացքում Յակոբ ասել էր, որ Հայաստանի մտաւորականութեան ու մշակոյթի գործիչների դերը մեծ է սփիւռքահայերի վրայ, նրանց հետ հանդիպումներում «Հայրենիքի» ձայն է լսուում, այն մեծ ազդեցութիւն ունի արտերկրի հայերի ազգային ոգու պահպանման դերի համար եւ որ սփիւռքահայերի ոգեշնչում է Հայաստանի վերելքը: Երեկոյթի մասնակից՝ օրիորդ Տատրեան Ատրինէի՝ «Գեհնի ձամբուն վրայ» հատորի հեղինակի ելոյթը, Հայ կնոջ մասին խօսքը շատ յուզել մասնակիցներին: Հայ կին... պահպանել ազգի լեզուն, սովորոյթները, մանուկներին քնացրել հայ իմաստունների օրօրներով, նրանց պատմել Դաւիթի քաջութեան ու մարդկային կերպարի մասին, «Վարդանի ու Հայոց պատերազմ»ի, հայրենի աշխարհի ու քրիստոնէական հաւատքի բարոյական դրուագների մասին, Հայ իմաստունների սիրուն հէքիաթների մասին, մանուկները մեծացել են հայու ճշմարտութեան ոգու կրակը իրենց սրտերում, հոգիները լցրել Հայրենիքի կարօտով: Մայրիկ... երկնի լոյսն է, կեանքի պարզեւր, արարչութեան սիրոյ խորանը: Պոլսեցի Տատրեան Ատրինէ... ենթադրում եմ նա կը լինէր Պոլսեցի Վահագն Տատրեանի տոհմից: Վահագն Տատրեան... աշխարհում յայտնի ցեղասպանագէտ էր, մահացել մի քանի տարիներ առաջ, ինձ գնահատող բարեկամս էր, յաճախ էինք հեռախօսով զրուցել: Գլենտելի կեղծոնական գրադարանում նրա ելոյթի ընդմիջմանը, բարձրացել էի բեմահարթակ, գրկախառնուել էինք, ներկաները զարմացած նայել մեզ: Համոզիչ փաստարկներով թուրքին ապացուցել, որ իրենց իսկ օրրանում հայերի նկատմամբ ցեղասպանութիւն էին իրականացրել, հայրենազրկել նրանց, մահուան կարաններով տարել անապատներ: Իրական կասկածներով ապացուցել, որ գերմանացիք մասնակից եղել հայերի ցեղասպան

նութեան իրագործմանը: Գերմանիայի Կանցլեր Անժելա Մէրկելի համաձայնութեամբ իրենց խորհրդարան-Ռայխստագում, բացարձակ մեծամասնութեամբ քուէարկել թուրքիայում կատարուած հայոց ցեղասպանութեան ճանաչմանը ի նպաստ, այն էլ միայն շատ-շատ ուշ: Կարող է մեղանշել էին, թէ Աստուած իրենց ասել, որ շատ էք ուշացել, ընդունեցէք ձեր մեղքը, կարող է այդտեղ գալուց թողութիւն շնորհեմ, իսկ այստեղ դժոխքի կրակ...:

Մարմարա ծովի կղզիներ այցելութիւնից յետոյ Մ. Աղայեանի խումբը վերադարձել էր Ստամպուլ: Գնացել էին այցելելու թանգարանի վերածուած, սուլթանների Պալեանների արարած Դոլմա-Բահչէ ապարանքը: Հոգեկան հիւստանքի հրաշափայլ լոյս վառուել իրենց հոգիներում, ցեղի հանճարի արարում էր այն, այնպէս ինչպէս Տրդատի, Մանուկի, Մոմիկի, Սինանի ապարանքները: Ողորմի էին ասել հազար-հազար «Հայ» ճարտարապետներին, Հայ մարդ գնա՛ կորուսեալ երկիր ամէն քայլիդ կանգուն, փլած ապարանքներ, ամբողջներ, աղօթքի տաճարներ, Կիլիկիա-Հայաստան ճարտարապետների պաշտպանական ամբողջներ, իրենց արարումների 90 տոկոսը եղել պաշտպանական կառուցներ: Հայ ականաւոր ճարտարապետ Կարապետ Պալեանի 1853 թուականին ստեղծած կառուցն էր այն, նրա ու տոհմակիցների հարիւրաւոր տաճարներ, Պոսֆորի ափին անցնող նաւերին գեղեցկութեան հրաշք պատճառել, նրա ջրերը ճողփող նաւերի բազրիկներին յենած անցորդներին այն երազ թուացել: Հրաշագեղ Ստամպուլի Պալեան ճարտարապետների կառուցած ապարանքները, Ստամպուլի ափերին վառու ջահը ձեռքին կանգնած «Թամար» գեղեցկուհու լոյսը:

Պալեանների ճարտարապետական տոհմը մօտ երկու դար շնչացրել Ստամպուլը, այնտեղ կառուցած ճարտարապետական կոթողները, գեղագիտական զարմանահրաշ հրճուանք պատճառել եւրոպական մասնագէտներին ու այցելուներին: Երգիծաբան Յակոբ Պարոնեանը իր ժամանակակից տոհմի աւագ Սարգիս Պալեանին վերագրել Ստամպուլում կառուցուած 30 կոթողների արարումը: Սարգիս Պալեան, 1864 թուականին, Լոնտոնում կայացած միջազգային բանուորական ժողովին կազմակերպուած ցուցահանդէսի այցելութեան ատեն ներկայացուած եղել աշխարհի առաջին շոգեքարչի շարժիչը... նրա գիւտարարն եղել նոյն ինքը Սարգիս Պալեանը, հայկական «Մայր Արաքսի Ափերով» հոգեզմայլ երգի հեղինակը: Կարծես փոթորկած գետի ափերին կանգնած ունկնդրել նրա խոռովքը, «քանդակել» նրա ալիքների ելեւէջները: Ամերիկայի Արեւմտեան ափի Ռամկավար Ազատական Կուսակցութեան ատենապետ՝ բժիշկ Ռաֆֆի Պալեանը, եւ հոգեհունչ երգչուհի Լուսինէ Ջաբրեանի ամուսին երաժշտագէտ ու շարականագէտ Խորէն Պալեանը, Պալեանների տոհմից են (մամուլի հաղորդումներից): Լուսինէ Ջաբրեանի մահուանը Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոս յայտարարել՝ «Լուսինէի մահով մշտական խոշոր աստղ ծագեց երկիւքում»: Ամէն կիրակի, էջմիածնի տաճարում կիրակնօրեայ պատարագին Երեւանից շատ մարդիկ

էին գալիս նրա երգեցողութիւնը ունկնդրելու:

Փարիզի «Լը Մոնտ Իլլուստրի» հանդէսի խմբագիրը գրել էր՝ «Ստամպուլ այցելութեան առթիւ, ճամբորդներ իրենց տպաւորութիւններում յայտնել, որ արհեստով ու գիտութեամբ արարուած քաղաքի այդ հոյակապ շէնքերն ու պալատները, գարդարում են Պոսֆորի երկու ափերը, այդ հրաշալիքները Սուլթանի հռչակաւոր ճարտարապետ Կարապետ Ամիրա Պալեանի ու նրանց տոհմի ճարտարապետների արարումն է»: Խումբի թուրք ուղեկցուհին պնդել էր, որ ճարտարապետ Պալեանները իտալացի են: Յետոյ, որոշ աղբիւրներից տեղեկացել նրանց Հայ լինելու մասին: Դոլմա-Բահչէ պալատի շքամուտքի առաջ, Վրացական հովեկների խումբի ներկայութեան, յայտարարել՝ «Սոֆիա տաճարի այցելութեան ատեն խումբի անդամներից մէկի հետ վիճաբանել էի, որ Պալեանները իտալացի էին, ես սխալ էի, նա ճիշտ էր, Պալեանները Հայ են», այդ հանճարեղ ընտանիքը ունեցել ճարտարապետների մի քանի սերունդներ, Պալեանները Ստամպուլում կառուցել են 40 հրաշալիքներ, այցելելու ենք նրանցից մէկին՝ սուլթանի «Դոլմա-Բահչէ» պալատ: Չգուշացրել էր խումբից չգատուել, կարող էին կորչել պալատի 350 դահլիճները իրար կապող միջանցքներով: Նրա անուան մասին պատմել էին, որ պալատի կառուցման վայրը ճահճահոտ մի տեղ եղել այն աւազով ու հողով լցրել, «Դոլմա-Բահչէ (դոլմա, թուրքերէն դոլմա-լցնովի):

Դոլմա-Բահչէ պալատում եղել էին Հայ ականաւոր ծովանկարիչ՝ Յովհաննէ Ալազովսկի-ի 10-ից աւելի ծովանկարներ, որոնք գարդարել էին սուլթանների ընդունարաններն ու կանանոցները: Թանգարանում ցուցադրուած եղել սուլթանների ստացած նուէրները՝ ոսկեղէն իրեր, թանկարժէք աղամանեղէն քարեր ու նրանց արշաւանքներից բերած կողոպուտներ: Այվազովսկի-ի նկարների կողքին եղել հոլանտական, ֆլամանտական, իտալական վարպետների աշխատանքներ, սակայն թրքական արուեստի ոչ մի նմուշ, այս ու այլ պալատների թանգարաններում: Թուրքիայի պատմութեան ընթացքում Հայեր մեծ դեր կատարել նրանց մշակոյթային կեանքում: Հայը կարծես բնատուր առաքելութիւն ունի զարկ տալու ուրիշ ազգերի քաղաքակրթութեան զարգացման, իր ներդրումը կատարելու մարդկութեան առաջնութեանը: Բարբարոսների հետ անհաւասար պայքարում կանգնել խորտակման եզրին: 1915 թուական, ոչնչացուել ազգի մտաւորականութիւնը, մշակոյթային կոթողները, Վանի շրջանի բարձրաստիճան գիւնուորականը որոշած եղել ումբահարել Աղթամարի Սուրբ Խաչ տաճարը, քաղաքապետը ընդիմացել էր: Այժմեան Դեկտեմբեր-Յունուար դէպքերը, կործանում են հայոց մշակոյթային յուշարձանները, հայկական Նախիջեւանում կործանել քսան հազար խաչքարեր, կործանել այն ինչ չիչեցնում էր հայերի երբեմնի շքեղ, գեղեցիկ կառուցները եւ հիմա այնտեղ ոչ մէկ Հայ...: Նախորդ դարերում աւելի հզոր եղել հայերը դէպը Արեւմտեան Հայաստան, Անատոլու (Յունարէն արեւելեան նահանգներ): Երկար ատեն թուրքերը ուրացել էին հայերի նպաստը իրենց

Ս. Գրիգոր Նարեկացիի Նուիրուած Միջեկեղեցական Արարողութիւն Վատիկանի Մէջ



Շաբաթ, 27 Փետրուարին վատիկանի պարտէզներու մէջ դրուած Ս. Գրիգոր Նարեկացիի արձանին մօտ հանդիսաւոր միջեկեղեցական արարողութիւն տեղի ունեցաւ՝ նախաձեռնութեամբ Հայ Եկեղեցւոյ Սուրբ Աթոռի մօտ Ներկայացուցչութեան եւ Հայաստանի Հանրապետութեան Սուրբ Աթոռի մօտ Դեսպանութեան ու հովանաւորութեամբ վատիկանի Արեւելեան Կաթողիկէ Եկեղեցիներու Ժողովի կառուարիչ կարդինալ Լէոնարտօ Սանտրիի եւ Քրիստոնէական միութեան խորհուրդի քահանայապետական խորհուրդի նախագահ կարդինալ Կուրտ Կոխի:

Հայ մեծագոյն սուրբի ու աստուածաբանի յիշատակութեան արարողութեան՝ նախագահութեամբ խաժակ Արքեպիսկոպոս Պարսամեանի ու ներկայութեամբ կարդինալներ Լէոնարտօ Սանտրիի ու Կուրտ Կոխի, իրենց մասնակցութիւնը բերին հայ առաքելական եւ կաթողիկէ հոգեւորականներ:

Հանդիսութեան ներկայ էին Հայաստանի Հանրապետութեան Սուրբ Աթոռի եւ Խաչիոյ Հանրապետութեան մօտ դեսպաններ՝ Տիար Կարէն Նազարեան եւ Տիկին Ծովինար Համբարձումեան, Սուրբ Աթոռի մօտ տարբեր երկիրներու դեսպաններ, ինչպէս նաեւ Հռոմի Հայ համայնքի ներկայացուցիչներ: Հանդիսութեան ժամանակ՝ հայ համայնքի երիտասարդ երաժիշտներու կատարմամբ հնչեցին Սբ. Գրիգոր Նարեկացիի տաղերէն՝ «Հաւուն նաւուն» (շուի՝ Սոնա Յակոբեան) եւ «Սայլն այն իջանէր» (երգեցողութիւն՝ Մարինէ Գրիգորեան):

Իր փակման խօսքի մէջ դեսպան Նազարեան՝ բնորոշելով Գրիգոր Նարեկացիին որպէս «Արեւելքի եւ Արեւմուտքի միջեկեղեցական կամուրջ»,

որն ունակ է միաւորել ժողովուրդներն ու եկեղեցիները», վերահաստատեց հայ ժողովուրդի կամքը «միասնական շարունակել եղբայրական ճանապարհը եւ համաշխարհային երկխօսութիւնը՝ ի նպաստ միմեանց սուրբ գանձերու փոխանակմանը՝ սիրոյ, յարգանքի եւ փոխվստահութեան ոգով»:

Նախքան Միջեկեղեցական արարողութիւնը, Սբ. Պետրոս Տաճարին մէջ՝ Կարդինալ Լէոնարտօ Սանտրիի՝ Արեւելեան Կաթողիկէ եկեղեցիներու միաբանութեան կառուարիչը, Սուրբ Պատարագ մատուցելու յիշատակ Սուրբ Գրիգոր Նարեկացիին: Համապատարագեցին Լեւոն Արքեպիսկոպոս Զէքիեան, առաջնորդ թուրքիոյ Հայ Կաթողիկէ համայնքի եւ Քրիստոնէական միութեան խորհուրդի քահանայապետական խորհուրդի քարտուղար Եպիսկոպոս Բրայըն Ֆարէլ:

Հարկ է յիշել, որ 12 Ապրիլ, 2015 թուականին՝ Հռոմի Սուրբ Պետրոս Տաճարին մէջ՝ Հայոց Յեղասպանութեան 100-ամեայ տարելիցին նուիրուած Սուրբ Պատարագի ընթացքին Ֆրանչիսկոս Պապը Սուրբ Գրիգոր Նարեկացիին հռչակեց «Վարդապետ Եկեղեցւոյ»: Երեք տարի ետք՝ 5 Ապրիլ, 2018 թուականին Հռոմի Քահանայապետը՝ Ամենայն Հայոց եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսներուն հետ, վատիկանի պարտէզներուն մէջ օրհնեց Սուրբ Գրիգոր Նարեկացիի արձանը:

Իսկ վերջերս, 2 Փետրուարին, Ս. Աթոռի Պաշտամունքի եւ Խորհուրդներու մատակարարման ժողովը յայտարարեց Ֆրանչիսկոս Պապի հրամանը՝ արձանագրել Սուրբ Գրիգոր Նարեկացիին Լատինական Եկեղեցւոյ ծիսական օրացոյցին մէջ, Հայոց Սուրբին յիշատակելով ամէն տարի 27 Փետրուարին:

Հայ Զինուորները Փրակա Ժամանած են՝ Բժշկական Օգնութիւն Ստանալու Նպատակաւ

Փրակայի վացլաւ Հաւելի անունան տրուած հայ Զինուորացիներու հայերը եւ ՀՀ դեսպանութեան ներկայացուցիչը դիմաւորած են արցախեան պատերազմի ընթացքին տուժած զինուորներ Նորայր Սուքիասեանը, Արամ Աւետիսեանը եւ հայրը՝ Արմէն Աւետիսեանը:

Նորայրը մասնակցած է Ասիերանի մէջ ընթացած մարտերուն, կորսնցուցած է մէկ ոտքը, իսկ Արամը կորսնցուցած է երկու ոտքերը՝ վիրաւորուելով Ջրականի (Ջաբրայիլ), ապա Բերձորի (Լաչին) մօտ ընթացող մարտերուն: Արամը Աշաշուր գիւղէն է, Նորայրը՝ Գիւմրիէն: Տղաքը Փրակայի եւ Զինուորացի քաղաքներու մէջ կ'անցնին ոչ միայն անհրաժեշտ բժշկական զննումէ, այլեւ կը ստանան բարձրակարգ շինձու անդամներ:

Տղոց շինձու անդամներ տրամադրելն ու անհրաժեշտ բժշկական օգնութիւնը կազմակերպած է «Տո՛ւր ինձի յոյս» բարեգործական կազմակերպութիւնը: «Հայերն այսօր»-ի հետ զրոյցներէն մէկուն ընթացքին՝ հիմնադիր-ղեկավար Սոնա Վարդանեանը նշած էր, որ Հայաստան գալու նպատակը մէկն էր՝ ծանօթանալ տղոց առողջական վիճակին եւ հասկնալ, թէ որոնք առաջնային բժշկական օգնութեան կարիք ունին: Ճիշդ այդ ժամանակ ալ հիմնեց «Տո՛ւր ինձ յոյս» բարեգործական կազմակերպութիւնը եւ սկսաւ դրամահաւաքները:

Կազմակերպութիւնը պայմանագիր ունի շինձու անդամներ տրամադրող գերմանական Օթթոպոլ ընկերութեան հետ, որ առաջարկած է 33 տոկոս զեղչ: Սոնան նաեւ հրաւեր ստացած է «ԱՆՈ» կուսակցութեան խորհրդարանական ներկայացուցիչներու կողմէ եւ պայմանաւորուածութիւն ձեռք բերուած է. տղոց վիրահատութեան անհրաժեշտութեան պարագային՝ Փրակայի Զինուորական հիւանդանոցէն ներս չեխիւցի բժիշկները անվճար պիտի իրականացնեն զայն:

Առաջին փուլին Փրակայի մէջ շինձու անդամներ պիտի ստանայ հինգ հոգի՝ Արամն ու Նորայրը, Սարգիս Ֆիտանեանը, Էրիք Գրիգորեանը եւ Սարգիս Սարգիսեանը: Տղաքը երեք ամսուայ ընթացքին պիտի ստանան անհրաժեշտ բժշկական օգնութիւնը:

Աղբիւր՝ orep.eu

80,000 Մեքսիկացիներ Անհետացած Կամ Անանուծ Թաղուած

Los Angeles Times օրաթերթը իր կիրակնօրեայ համարին մէջ, գոյգ մը թղթակիցներու ստորագրութեամբ, շահեկան յօդուած մը գրած է Մեքսիքոյի մէջ, խորհրդաւոր պայմաններու ներքեւ կատարուած ահաբեկչական արարքներուն եւ սպանութիւններուն մասին: Արդարեւ, վերջին 15 տարիներուն, շուրջ 80 հազար մեքսիկացիներ անհետացած եւ անյայտ կորած են: Ամէն տարի հազարաւոր դիակներ դիտարկուած (մօրկ) կը տարուին առանց ստուգելու անոնց ինքնութիւնը, որոնք յետոյ կ'ամփոփուին հաւաքական փոսերու մէջ:

Թիւնը ճանչնալու, մինչեւ իսկ ոսկորներու ստուգումներով յայտնաբերումներ կատարելու:

Սակայն այդ ճիգերը կանգ առին covid-19-ի համավարակի պատճառով, որով դատաբժշկական մարտահրաւերներ արժեքդրուեցաւ չի կանխատեսուած ձեւով:

Երկրի մարդու իրաւունքներու պաշտպան կոմիտէութեան գլխաւոր պետ Ալեխանտրօ Էնսիդեց մարդասիրական եւ դատաբժշկական տաղանայի լուծման համար: Տարիներէ ի վեր երկրի պատասխանատուները հրաժարած են այս հարցին հիմնական լուծում տալէ: Ոչ միայն երկրի ապահովութիւնը չեն երաշխաւորած, այլեւ հարաւորութիւնն են ընձեռած կորուստեալները գտնելու եւ զանոնք իրենց հարազատներուն վերադարձնելու:

«Շատ քիչ թիւով գերեզմանատուներ կան, որոնք ճշգրիտ արձանագրութիւն կը պահեն թաղուածներու վաչրի եւ քանակին մասին», ըսաւ մարդաբաններու խումբի անդամ Ռօքսանա Էնրիքէզ Ֆարիասը: Քայքայուած դիակներու եւ երբեմն ալ անոնց բլասթիզ պարկերու մէջ գտնուելը, մեծապէս կը դժուարացնեն նմուշներ ապահովելու գործը: Շատ մը պարագաներուն դիակներուն անունները եւ տարիքները ճանաչելի կ'ըլլան, առանց ընտանեկան ծիւխի (DNA), երեւոյթ մը որ օգտակար կրնար ըլլալ ճանաչողութեան համար:

Վերջերս կատարուած հետաքննութենէ մը ի յայտ եկած է որ 39,000 մարմիններ, անծանօթ ինքնութիւններով, ի պահ դրուած են պետական պահեստանոցներու մէջ 2006 թուականէն ի վեր: Անոնցմէ 2,589 դիակներ նուէր տրուած է բժշկական դպրոցներուն: Իսկ աւելի քան 28000 մարմիններ կամ դիակիզուած են եւ կամ թաղուած հանրային գերեզմանատուներու մէջ: Իսկ մնացեալներուն մեծ մասը՝ կը մնան դիտարկուածներու մէջ եւ կամ կարելի չէ եղած տեղաւորել: Կառավարական պատկան պաշտօնները 2019ին ողջունեցին մարդկային իրաւանց պաշտպաններու այն առաջարկը, որով կը նպատակադրուի ազգային եւ միջազգային մասնագէտներու խումբ մը կազմել, դիակներու ինքնու-

2018ին երբ Թամօլիբաս նահանգի մէջ, 265 դիակներու ոսկորներ յայտնաբերուեցան տարբեր տուփերու մէջ, պաշտօնները կրցան միայն անոնցմէ 30-ի ինքնութիւնը ստուգել:

Չանգուածային լրատուամիջոցներու վերնագիրներուն նիւթ դարձաւ Հալիսո Գոնսալեսի մէջ 2018ին պատահածը: Արդարեւ, նահանգի դիտարկուածներուն մէջ տեղ չի կար, քանի որ ան խճողուած էր 300 անյայտ դիակներով, որոնք հոն բերուած էին Կուալտալապալա շրջակայքէն, քանի որ տեղուց բնակիչները սկսած էին բողոքել վարչահոտութեան: Նոյն տարին գայթակղութիւն մըն ալ երեւան եկաւ Թիհոանայի մէջ ուր դիտարկուածները լեփ լեցուն էր ոճրագործութեան գոհ գացած մեղեալներով:

Վերջին լուրերուն համաձայն Covid-19 համավարակի պատճառով, պաշտօնական լուրերը կը նշեն որ Մեքսիքոյի մէջ մահացողներու թիւը մօտ 200,000 է: (Ամփոփուած)

ԽՆԱՄԱԿԱԼ ԿՈՒԶՈՒԻ
Օգնական կ'ուզուի խնամելու մեծահասակ տիկին մը
առտուան 8:00–էն մինչև կ.ե. ժամը 2:00;
Շաբաթը 4 օր - Pasadena, CA
Մանրամասնութիւններու համար հեռաձայնել
626 710 3557 կամ 626 710 0621

**Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին**

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

ՃՈՐՃ ԳԱՆՈՒՍՏԵԱՆԻ մահուան առթիվ **ՏԻԿ. Ժաննա Գեորգեան** եւ ընտանիք իրենց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի աչրիին՝ **ՏԻԿ. Լուսին Գալուստեանին** եւ դուստրերուն: Առ այդ \$200 կը նուիրեն «Մասիս»ին:

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

ՃՈՐՃ ԳԱՆՈՒՍՏԵԱՆԻ մահուան առթիվ **Տէր եւ Տիկ. Արա եւ Լիլիան Պոսնոյեան** իրենց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի աչրիին՝ **ՏԻԿ. Լուսին Գալուստեանին** եւ դուստրերուն: Առ այդ \$100 կը նուիրեն «Մասիս»ին:

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

ՃՈՐՃ ԳԱՆՈՒՍՏԵԱՆԻ մահուան առթիվ **Տէր եւ Տիկ. Էտի եւ Սարին Պոսնոյեան** իրենց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի աչրիին՝ **ՏԻԿ. Լուսին Գալուստեանին** եւ դուստրերուն:

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

ՃՈՐՃ ԳԱՆՈՒՍՏԵԱՆԻ մահուան առթիվ **Տէր եւ Տիկ. Ալեքս եւ Զուարթ Պոսնոյեան** իրենց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի աչրիին՝ **ՏԻԿ. Լուսին Գալուստեանին** եւ դուստրերուն: Առ այդ \$150 կը նուիրեն «Մասիս»ին:

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

ՃՈՐՃ ԳԱՆՈՒՍՏԵԱՆԻ մահուան առթիվ **Տիար Գեորգ Գասպարեան** իր ցաւակցութիւնը կը յայտնէ հանգուցեալի աչրիին՝ **ՏԻԿ. Լուսին Գալուստեանին** եւ դուստրերուն: Առ այդ \$150 կը նուիրեն «Մասիս»ին:

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

ԱՆԱՀԻՏ ԳԹՃՖԵԱՆԻ մահուան առթիվ **Տէր եւ Տիկ. Յարութ եւ Ռոզին Տէր Դաւիթեան** իրենց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ամուսնոյն՝ **Սահակ Գթրճեանին** եւ զաւակներուն: Առ այդ \$100 կը նուիրեն «Մասիս»ին:

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

ՎԱՐԴՈՒՀԻ ԵԱՂԼՃՆԵԱՆ-ԼԱԶԻՆԵԱՆԻ մահուան առթիվ **Տէր եւ Տիկ. Յարութ եւ Լուսին Պոյաճեան** իրենց ցաւակցութիւնները կը յայտնեն **Լաչինեան ընտանիքին**: Առ այդ \$100 կը նուիրեն «Մասիս»ին:

Նոր Մտածելակերպ, Նոր Հայաստան

Շարունակուած էջ 6-էն

նագան յօդուածներու մէջ գուգահեռներ մատնանշած էինք անցեալի եւ ներկայի դէպքերուն, կարեւորելով անոնցմէ դասեր քաղելու անհրաժեշտութիւնը: Օրինակի համար նշենք, Հոկտ. 2, 2010-ին հրատարակուած՝ «Մարդարապատի Հերոսամարտէն Կարսի խայտառակութիւն, Արցախեան Հերոսամարտէն...» յօդուածը: Հոն կը գրէինք. «Արդեօ՞ք յուսահատական վիճակներու մէջ իտէպիստներու զոհաբերութեամբ կերտուած յաղթանակները աւարի կեր կը դառնան խաղաղ ժամանակներու պատեհապաշտներու, ազգային գիտակցութիւնէ եւ հայրենասիրութիւնէ գոբրկ վաշխառուները»: Մեր յօդուածը կ'աւարտէինք. «Կը գիտակցի՞նք արդեօք, որ այս ընթացքով Արցախեան հերոսամարտն ալ կրնայ յանգիլ նոր Կարսեան խայտառակութեան: Մտածենք ու գտնենք հնարը փոխելու այս ընթացքը»:

Այս յօդուածով մենք ջանացինք ամփոփ պատկեր մը տալ անցած 30 տարիներու ընթացքին հրատարակած մեր աւելի քան 300 յօդուածներով ջատագոված գլխաւոր միտքերուն: Նկատի առած յօդուածի մը սահմանափակ տարողութիւնը, բնականաբար դուրս ձգեցինք շատ մը այլ կէտեր: Բայց այս քանն ալ բաւարար է հաստատելու, որ եթէ մեր քաղաքական առաջնորդները,

մտաւորականութիւնն ու ժողովուրդը, գործէին վերը նշուած կէտերու համոզումով, ապա մեր այսօրուան իրավիճակը շատ աւելի բարենպաստ պիտի ըլլար: Բազմաթիւ անգամներ մենք հազանգ հնչեցուցած ենք, որ սխալ ընթացքի մէջ ենք եւ «մտածելակերպի ու գործելաձեւի ԿՏՐՈՒԿ ՇՐՋԱԴԱՐՁ է պէտք, կասեցնելու քայլքայման տանող մեր ներկայ ընթացքը: Այս հանգիստ բայց կործանարար ընթացքը պէտք է ԱՆՀԱՆԳՍՏԱՅՆԵԼ, նոր ուղիներու որոնումով եւ նոր հեռանկարներու պատկերացումով» («Կտրուկ Շրջադարձ», Ապրիլ 26, 2014): Բազմաթիւ անգամներ մենք կարեւորած ենք մեր ապագան մեր ձեռքով եւ միասնական ուժերով կերտելու անհրաժեշտութիւնը: «Մարդ կայ, որ ճակատագրապաշտ է ու կը յանձնուի ճակատագրի քմայքին: Մարդ ալ կայ, որ կը հաւատայ թէ իր իմացական ուժով կարող է կերտել ա՛յն ճակատագիրը, որուն ինքզինք արժանի կը գտնէ... Մենք մեր ձեռքով պիտի կերտենք մեր ապագան, վստահելով նախ եւ առաջ մեր սեպհական ուժին ու մեր արեան կանչին: Պիտի չի՛ հանդուրժենք, որ որեւէ ուժ, ներքին թէ արտաքին, կաշկանդէ մեր մտքերն ու մտածողութիւնը: Մտքեր կաշկանդողը չի՛ կրնար ազգը առաջնորդել արժանապատիւ ապագայի ուղիով: Համոզուած ըլլալով, որ մեզ նման փոքր

Այցելութիւն Մարմարա Ծովի Կղզիներ

Շարունակուած էջ 13-էն

մշակոյթի կեանքում, ըստ Մ. Աղայեանի հաղորդումի արդէն խօստովանում են հայերի դերը իրենց երաժշտութեան, թատրոնի, մամուլի, արհեստների, գիտութեան եւ այլ ու այլ մշակոյթի բնագաւառներում: Թուրք արուեստաբանը գրել է, որ 1859 թուականին թուրք թատրոնը հիմնադրել է Հայ դերասանապետ Յակոբ Վարդովեանը, Տիգրան Զուխաճեանը հեղինակել երկրի առաջին օպերան, օպերետներ, երաժշտական գործեր: Թուրքիայի աշուղներից 400-ը ծագումով հայեր են:

Կեղծում են պատմութիւն, էս հողը մէրն է, լեռները մէրն են, ջուրը մէրն է կանչում են: Իրենց զաղթի ընթացքում բնակել էին նաեւ մարերի երկիր Մարաստանում, նրանց Ատրոպատէս զօրավարի իշխած երկիրը պարթևները ու հայերը ուղղակի Ատրպատական անուանել, հնչիւնափոխուելով դարձել Ազրպէյջան: Տարբեր ցեղախմբերի միացումով այնտեղ «Աղուանք» պետութիւն հիմնադրուել, արաբները այն նուաճել իրենց արշաւանքների ժամանակ: Ուրիշ երկիր բնակած մարդիկ, կա՞րող էին տեղի բնակիչների ծիները գաւթել, դառնալ «Աղուան», իրենց էլ համարել նրանց ժառանգորդներ: Ժառանգականութիւնը կեանքի առեղծուածն է, այն քրոնոսոմների ծիների անորոշ փոփոխանակութիւն՝ Մութացիա լինել: Թուրքեր, ատրպէյճանցի թուրքեր, Միջին Ասիայի թուրքիկ ցեղերից են, բնակել կեղերոնական Ասիայում, Չինաստանի հիւսիս արեւմուտքի շրջաններ: Մոնղոլների արշաւանքների հետեւանքով գաղթել դէպի արեւելք, հաստատուել Անատոլիա, Բիւզանդական իշխանութեան տարածքներ:

Մոնղոլների դէմ կուռում թուրքեր օժանդակել էին սելջուքներին, որի համար նրանց պետ էր թողրուլը արտօնութիւն ստացել իր ցեղախմբով հաստատուելու ներկայ «Էսկի Ծէհիր» շրջանում: Էրթողրուլին յաջորդած որդի՝ Ղազի Օսման Ա. 1299-1323, օգտուելով Բիւզանդական կայսրութեան տկարացումից, ընդարձակել իրենց տարածքները, արշաւել Բուրսա, պաշարել, այն հռչակել երկրի մայրաքաղաքը, 1326 թուականին այն ամբողջապէս նուաճել էր իր որդի՝ Օսման Ա.-ը: 1299 թուականին Օսմանի անունով աշխարհին երեւացել Օսմանեան պետութիւնը, թուրքերի ներկայ առաջնորդ էրտողան տօնախմբել էր այդ աւագակապե-

տական պետութեան հիմնադրումը, այն չարիք եղել աշխարհին, ի մասնաւորի հայերին:

Մ. Աղայեանի խոսքերը հասել Բուրսա, գեղատեսիլ վայրերով ու ամառոցներով Բուրսա: Այնտեղ էին մեծահարուստների ամառանոցները: Բարձրագիւր լեռան լանջերին եւրոպականի տեսակի կառուցներ էին: Բուրսայից սկսել է ժողովուրդներին չարիք պատճառած նրանց պետականութիւնը: Բուրսա, Մելգոնեանի առեւտրի բաժնի դասախօս Վահան Փափագեանը Բուրսայի ծնունդ էր, պատմում էր, որ գաղթի գնալու ատեն, մայրը հարցրել իրեն, «Տղաս գնա՞ տես տան դուռը փակ է»: Հայ բարեսիրտ, քնքուշ կին, քու հոգին ու սիրտը արարարիչի բարութեամբ լցուած կին, ինչպէս հաւատացիք թուրքին, իմանում էիք, որ մահուան անդրաձայնաբայով էիք անցնելու, ձեր մեկնելուց մի քանի ռուպիներ յետոյ պիտի ջարդէին դուռը, այնպէս խուժանը պիտի կողոպտէր, աւերէր հազար տարիների տունը, սերունդների քրտինքով արարած տունը, տան տիկնոջ փափաքած բարիքը...:

Պուրսայում գտնուել էին առաջին սուլթանների դամբարանները: խոսքը հնարաւորութիւն ունեցել ծանոթանալու նրանց մասին պատմող փաստաթղթերին, հաստատել նրանց որոշ պատմաբանների պատմութիւն կեղծելը, որոնք իրենց ժողովուրդի ու պետականութեան սկիզբը տարել պատմութեան հնագոյն շրջաններ: Մ. Աղայեան հաստատում, որ ժամանակակից թուրքերի նախնիները սերոնել են Օղուկ անունը կրող ցեղերից, որոնք սելջուքների ատէն Միջին Ասիայից ներթափանցել Անատոլիա: Թուրքացել, քայքայուել էին սելջուկեան միւսուրումները: Անատոլիայի հիւսիս-արեւմտեան մասում Օղուկ ցեղախմբի առաջնորդ՝ էրթողրուլ ստեղծել կիսանկախ իշխանութիւն: Նրա որդի Օսման (1299-1326) անկախացել, իր անունով երկիրը կոչուել Օսմանեան, յետագայում Օտտոմանեան պետութիւն: Տարածաշրջանի ժողովուրդներին մտահոգած եղել նրանց հզորացումը: 1218 թուականին, Կիլիկեան Հայաստանի լեւոն 2-րդ ու Հունգարիայի թագաւորները համաձայնել էին համատեղ պայքար մղել նրանց դէմ, նոյնիսկ պայմանաւորուել բարեկամաբան կապեր ստեղծել արքայդուստր Չապելին կնութեան տալու հունգարական թագաժառանգին: Այդ կապը խափանուել էր Լեւոն երկրորդի մահուան պատճառով:

Արցախեան այս վերջին պատերազմին մեր կրած պարտութիւնը պէտք է՝ ընկճէ մեզ, այլ՝ զօրացնէ մեր մարտունակութիւնը, քաւելու մեր սխալները եւ շարժուելու առաջ: Մենք տակաւին յուսալից ենք, որ Հայաստանի երիտասարդ սերունդը մեզ պիտի առաջնորդէ այդ ուղիով: Աւելի քան 400 տարիներ առաջ, Մոնթեան գրած է. «Պարտութիւններ կան, որոնք աւելի փառաւոր են, քան յաղթանակները»: Մոնթեանի խօսքի արդարացման գործընթացը կը սկսի մեր ձախողութեանց իսկական պատճառները բացայայտմամբ եւ պատասխանատուներու հաշուետուութեամբ:

«Ռեալն» Ու «Մանչեսթր Սիթին» Յաղթանակ Տօնեցին. Ախոյեաններու Լիկային

Ֆուտպոլի Ախոյեաններու լիկայի փլեյ-օֆին կայացան եւս երկու հանդիպումներ:

Իտալական «Աթալանթան» սեփական յարկի տակ ընդունեց Մատրիտի «Ռեալին»: Առաջին խաղակէսին ակումբներէն ոչ մէկը չօգտագործեց իր հնարաւորութիւնը, միայն խաղի աւարտին մօտ «արքայական ակումբը» կարողացաւ յաղթանակ կորզել: «Ռեալի» միակ եւ կողը նշանակեց Մենդին:



Միաժամանակ ընթացող երկրորդ խաղին Միլան խենկլատ բախի «Պորուսիան» սեփական յարկի տակ ընդունեց եւ պարտուեցաւ անգլիական «Մանչեսթր Սիթիին»: Քաղաքայիններու կազմին մէջ աչքի ինկան Սիլան Գաբրիէլ Ժեզուսը:

Խումբերու պատասխան հանդիպումը կը կայանայ Մարտի 17-ին:

Եւրոպայի Լիկայի 1/8 Եզրափակչի Ձոյգերը Յայտնի Են

Շուեյցարական Նիոն քաղաքին մէջ կայացաւ ֆուտպոլի Եւրոպայի լիկայի 1/8 եզրափակչի վիճակահանութիւնը:

«Արմենիա»-ի հաղորդումամբ՝ ըստ վիճակահանութեան իրարու դէմ կը մրցին՝

- «Այաքս» (Հոլանտա) - «Եանգ Պոյզ» (Շուէտ)
- «Ճինամօ Քիւլ» (Ուքրանիա) - «Վիլիաուելա» (Սպանիա)
- «Ռոմա» (Իտալիա) - «Շախտյոր» (Ուքրանիա)
- «Օլիմպիակոս» (Յունաստան) - «Արսենալ» (Անգլիա)
- «Տինամօ Զակրեպ» (Խուրուսթիա) - «Թոթենհեմ» (Անգլիա)
- «Մանչեսթր Եունայթըտ» (Անգլիա) - «Միլան» (Իտալիա)
- «Սլավիա» (Չեխիա) - «Կլասիօ Ռեյնճըրգ» (Սլովակիա)
- «Կրանատա» (Սպանիա) - «Մոլդէ» (Նորուեկիա)

1/8 եզրափակչի առաջին համդիպումները կը կայանան Մարտի 11-ին, իսկ պատասխանները՝ Մարտի 18-ին:

«Ռոման» Զիջեց «Միլանին». Մխիթարեանը Մասնակցեցաւ Ամբողջ Խաղին



Իտալիոյ ֆուտպոլի առաջնութեան 24-րդ հանգրուանին «Ռոման» արտագնայ խաղում մրցեց «Միլան»-ի հետ:

Միլանեան ակումբի կազմին մէջ աչքի զարնելու մի քանի հնարաւորութիւն ունէր շուէտ յարձակող Զլատան Իբրահիմովիչը: «Ռոման» եւս շեշտը դրած էր հակադրոհներու վրայ: Խաղային իրավիճակներէն մէկուն ժամանակ Հենրիխ Մխիթարեանը գրաւեց «Միլանի» դարպասը, սակայն կողը չարձանագրուեցաւ, քանի որ մինչ այդ «գայլերը» խախտած էին խաղի կանոնները: Խաղակէսի վերջին բաժնին ընթացքին հայ կիսապաշտպանը մի քանի անգամ հնարաւորութիւն ունէր բանալու հանդիպման հաշիւը, սակայն գնդակը այդպէս ալ չէր յայտնուէր ցանցին մէջ: «Միլանը» 41-րդ վայրկեանին առաջ անցաւ հաշուի մէջ: Նշանակուած 11-մեթրոնոց հարուածը անվրէպ կատարեց Քեսին:

Երկրորդ կէսի 50-րդ վայրկեանին «Ռոման» վերականգնեց հաշուի տարբերութիւնը: Հեռահար եւ դիպուկ հարուածով աչքի ինկաւ Վերետուն: 57-րդ վայրկեանին «Միլանը» նորէն առաջ անցաւ հաշուի մէջ: Կողը կատարեց Ռեվիչը՝ 1:2 հաշուով:

Հայաստանի ֆուտպոլի ազգային խումբի աւագ Հենրիխ Մխիթարեանը «Ռոմա»-ի մեկնարկային կազմին մէջ էր, մասնակցեցաւ ամբողջ խաղին եւ 80-րդ վայրկեանին արժանացաւ դեղին քարտի:

Այս խաղաշրջանէն յետոյ «Միլան»-ը Սերիա Ա-ի մրցաշարային աղիւսակին մէջ երկրորդն է 52 միաւորով, «Ռոմա»-ն՝ 5-րդը (44 միաւոր), իսկ առաջատարը 56 միաւորով «Ինտեր»-ն է:

Յովհաննէս Գաբուզեանը՝ Հայաստանի Ճատրակի Ախոյեան

Հայաստանի ճատրակի առաջնութեան 2021 թուականի ախոյեանն Յովհաննէս Գաբուզեանն է:

«Արմենիա»-ի հաղորդումով՝ Տիգրան Պետրոսեանի անուան ճատրակի առաջնութեան վերջին հանգրուանին Յովհաննէս Գաբուզեանը յաղթեց Մանուէլ Պետրոսեանին: Յաղթանակ տօնեց նաեւ Մամիկոն Ղարիբեանը:

11 հնարաւորէն հաւաքելով 8,5 միաւորով Հայաստանի 81-րդ առաջնութեան ախոյեան հռչակուեցաւ Յովհաննէս Գաբուզեանը: Երկրորդ եւ երրորդ տեղերը համապատասխանաբար կիսեցին Արման Փաշիկեանը եւ Սամուէլ Տէր-Սահակեանը:

Գաբուզեանը Հայաստանի ախոյեան դարձած է նաեւ 2017 թուականին:



Արոնեանը Ֆիդէ-ի Դասակարգման Աղիւսակին Մէջ 5-րդը Եւ Դեռեւս Հայաստանի Դրօշի Ներքեւ Է

Գրոսմայստեր Լեւոն Արոնեանը Ֆիդէ-ի դասակարգման աղիւսակին վրայ յառաջադիմած է մէկ հորիզոնականով:

«Արմենիա»-ի հաղորդումով՝ Մարտ ամսուայ դասակարգման աղիւսակին վրայ Արոնեանը 5-րդն է: Նախորդ ամիս ան կը զբաղեցնէր 6-րդ հորիզոնականը: Թէպէտ օրեր առաջ Արոնեանը յայտարարած էր, որ կը հեռանայ Հայաստանէն, սակայն Ֆիդէ-ի աղիւսակին մէջ ան դեռեւս կը ներկայացնէ Հայաստանը:

Հայաստանը ներկայացնող գրոսմայստերներէն Գաբրիէլ Սարգսեանը 54-րդն է, Հրանտ Մելքումեանը՝ 77-րդը:


Դասակարգման աղիւսակի առաջատարը աշխարհի գործող ախոյեան նորուեկիացի Մագնուս Կարլսենն է: Երկրորդը ԱՄՆ-ից Ֆաբիանու Կարուանան է, իսկ եռեակը կ'եզրափակէ Դին Լիժենը:



«Մանչեսթր Սիթի» Կը Մնայ Առաջին Դիրքի Վրայ

Անգլիոյ ֆուտպոլի ախոյեանութեան 26-րդ հանգրուանի ամենահետաքրքրական մրցումին առաջատար «Մանչեսթր Սիթին» իր դաշտին վրայ մրցեցաւ 4-րդ դիրքը գրաւող «Ուեսթ Հէմ Եունայթըտ» դէմ: «Սիթին» ունէր տարած քային առաւելութիւն եւ իր ունեցած առիթներէն երկուքը դիպուկ հարուածներով վերածեց կողի, մինչ «Ուեսթ Հէմ Եունայթըտը» իր կատարած 3 դիպուկ հարուածներէն միայն մէկը կրցաւ կողի վերածել:

Այս հանգրուանի աւարտին «Սիթին» 62 կէտով կը շարունակէ գլխաւորել առաջնութեան աղիւսակը՝ 12 կէտի առաւելութիւն ունենալով երկրորդ դիրքի վրայ գտնուող «Մանչեսթր Եունայթըտի» նկատմամբ:



«Պարսելոնան» Յաղթեց «Սեւիլիային»

Սպանիոյ ֆուտպոլի ախոյեանութեան 25-րդ հանգրուանի ամենահետաքրքրական մրցումին, 4-րդ դիրքը գրաւող «Սեւիլիան» իր դաշտին վրայ մրցեցաւ 3-րդ դիրքը գրաւող «Պարսելոնայի» դէմ:

«Պարսելոնան» աւելի արդիւնաւէտ ձեւով գործեց եւ իր կատարած 5 դիպուկ հարուածներէն նշանակեց երկու կող, Տեմպելէի միջոցով 29-րդ վայրկեանին, Մեսսիի փոխանցումով եւ Մեսսիի միջոցով 85-րդ վայրկեանին: Մինչ «Սեւիլիա» գրաւել մրցակիցի բերդը:

Այսպիսով «Պարսելոնան» տարաւ այս եղանակի իր 16-րդ յաղթանակը եւ 53 կէտով առժամ կը գրաւէ 2-րդ դիրքը: Մատրիտի «Աթլետիկոն» 58 կէտով կը շարունակէ գլխաւորել աղիւսակը:

